

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17378

# ԶԵՆՈՒՑՈՒՄ

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

1923 - 1924

ՏԱՐԻԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Գ.Ա.ԶԻՐԷ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱՔԵՐ»

1924

373

Զ - 52

373  
8-52

հայաստանի հանրապետության անկախության 25-ամյակի կոմիտեի կողմից

3 APR 2013

MAR 2010

370  
1913-25



# ԶԵԿՈՒՑՈՒՄ

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ

1923 - 1924

ՏԱՐԻԱՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

ԴԱԿԻՐԷ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱՔԵՐ»

1924

1003  
14849

17378

51330  
APR 20 1923

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ

Պատուարժան ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

Նոյն վարժ.ի 1923—24 ուսումն. տարւայ գործունեութեան մասին

Վարժարանիս 1923—24 ուսումն. տարին սկսեց և անցաւ մի քանի աննպաստ պարագաների մէջ:

1. Վարժարանի տնօրէնը, որ վարիչն ու պատասխանատուն է դպրոցի ֆիզիքական, բարոյական և մտաւորական վիճակի, ուսումն. տարւայ սկզբին չկարողացաւ իր գործի զլուխը գտնել իրանից անկախ պատճառներով: Նա տեղս հասաւ 1923 Հոկտ. 20-ին և տասը օր քարաւերիւս նստելով՝ հազիւ Նոյեմբեր 1-ին անցաւ իր պաշտօնին: Դպրոցական տարին արդէն սկսւած էր: Վարժարանիս նախորդ տնօրէն պ. Ս. Պետրոսեանի ղեկավարութեամբ և եղած դասատուների աջակցութեամբ աշակերտներն արդէն արձանագրւած և դասաւորւած էին համապատասխան դասարաններում և դասերն սկսւած էին Հոկտ. 2-ին առժամեայ մի պահացոյցով, որ կազմել էր պ. Ս. Պետրոսեան՝ դասատուների հետ համախորհուրդ: Քաղաքական ժողովը Հոկտ. 12-ին մի պաշտօնական գրութեամբ պ. Գ. Թագլորեանին յանձնարարում է կատարել տեսչական ընթացիկ գործերը. դասերը բաշխւում են դասատուների միջեւ, կազմւում է նոր պահացոյց՝ նախ քան քննութեամբ, որոշւում են դաստիարակներն ու նրանց պարտականութիւնները, կատարւում է դասագրքերի ընտրութիւն: Վարժարանի վերաբացման ընթացքին պ. Ս. Պետրոսեանն իր անձնւէր աշխատանքով մեծապէս նպաստում է դպրոցական գործին, որի համար Հոկտ. 12-ի մանկավարժական ժողովն իր գնահատանքն է արձանագրում: Իսկ այնուհետև, ամբողջ տարւայ

ընթացքին, փոխանորդէնի պաշտօնը վարում է պ. Գ. թագաւոր-  
եան:

Տնօրէնն անձանօթ լինելով թէ՛ տեղի կրթական պայման-  
ներին, թէ՛ աշակերտութեան կազմին ու որակին և թէ՛ դասա-  
տուների հմտութեան աստիճանին ու կրթական մակարդակին՝ բը-  
նական է, որ չկարենար և չկամենար միանգամից փոխել զըզ-  
րոցական կեանքի ընթացքը: որ արդէն մտած էր որոշ հունի  
մէջ: Իրա համար պէտք էր ժամանակ և միջավայրի ծանօթու-  
թիւն: Մտում էր եղածն առժամայէս ընդունել՝ յետագային  
թողնելով գործի կարգաւորումը: Այս հանգամանքը հարկադրում  
էր բարեփոխութիւններն աստիճանաբար և մաս-մաս կատարել,  
որով վարժարանը ստիպուած էր ապրել յարափոփոխ մի վիճակ,  
մինչեւ կարենար յարմարել տնօրէնի ըմբռնումներին: Անշուշտ  
վարժարանի վիճակը շատ աւելի դժնայուցիչ կը լինէր, եթէ զըզ-  
րոցական կեանքը ուսումն. տարւայ սկզբից մի որոշ և անշեղ  
ընթացք ունենար:

2. 1923—4 ուսումն. տարւայ սկզբին բոլոր դասատուներ  
ընդերկայ չէին: Պ. Մ. Ասլանեան հրաւիրուած էր իբր դիտու-  
թեան դասատու, բայց քաղաքական պայմանների բերումով ան-  
կարող եղաւ դուրս գալու Պոլսից: Տնօրէնութիւնը քաղաքական  
ժողովի հետ համախորհուրդ՝ Դեկտ. 1-ը համարեց վերջին սահ-  
մանը, որից յետոյ ազատ էր դիտութեան դասերի վիճակը անօ-  
րինելու: Նոյեմբերի սկզբին դասաբաշխութեան մէջ արդէն ար-  
ւած էր մի մասնակի փոփոխութիւն: Նոյեմբերի վերջերին կա-  
տարեց մի նոր դասաբաշխութիւն, որով մի քանի դասեր առ-  
նընեցան ոմանց ձեռքից և արւեցան ուրիշների: այսպէսով աշա-  
կերտները կարճ ժամանակէլ ընթացքում միեւնոյն առարկա-  
յից երկու դասատու ունեցան, ինչ որ չի կարելի նպաստաւոր  
պարագայ համարել: Յետագային թէ՛ աշակերտները և թէ՛ դա-  
սատուները ստիպուած էին շատ աշխատելու, որ կարենան որոշ-  
ւած դասընթացքը լրացնել \*):

\*) Դիտութեան դասատուին յատկացուած ամսականով հրա-  
ւիրւեցան երեք պաշտօնեայ. 1) պ. թ. Աբրահամեան, Տարր. Բ.  
դասարանի երրորդ գուգրնթացի համար, որ կազմեց Դեկտ. 1-ին.  
2) պ. Ա. Ոսկեբակցեան՝ հսկողի պաշտօնով՝ նախակրթարանի հա-

3. Շատ աննպաստ պարագայ էր և այն հանգամանքը, որ  
նոր դասարանների և սրահի կառուցումն ուսումն. տարւայ սկզբին  
զեռ չէր վերջացած: Ազգային նոր վարչութիւնը պաշտօնի գա-  
լով ամբան կէսին՝ բաւական ժամանակ չէր ունեցած նոր դասա-  
րանների կառուցումը և չէնքի յարմարացումը վաղօրօք աւար-  
տելու: Վերաշինութեան աշխատանքը վարժարանի մէջ վերջնա-  
պէս գաղարեց միմիայն Ջատիին, որ ասել է թէ տարւան մեծ  
մասը աշակերտներն աշխատեցին գործաւորների յարուցած ժխո-  
րի մէջ՝ ստիպուած լինելով յաճախակի տեղափոխութիւններ կա-  
տարելու: Առանց նոր դասարանների՝ անհնարին էր վարժարանի  
չէնքին մէջ պարփակել աշակերտութեան զանգաւածը, որ 100 հո-  
գով աւել էր քան նախորդ տարին: Իսկ առանց սրահի կառուց-  
ման անհնարին պիտի լինէր վարժարանը բուռի մէջ հաւաքել  
հսկողութեան տեսակէտով: Վարժարանը նախապէս շուրջանակի  
մի պատշգամբ ունէր, որի վրայ բացուած էին դասարանների  
դռները. որեւէ դասարան այցելելու համար տնօրէնն ստիպուած  
էր կամ դասերը խանգարելով մտնել այս ու այն դասարանը՝  
պատշգամբ դուրս գալու և ցանկացած դասարանը մտնելու հա-  
մար, ինչ որ անկարգութեան տեղիք էր տալիս, կամ թէ՛ վար-  
ժարանից դուրս գալով և եկեղեցու բակն անցնելով, նորից մտա-  
նելու դպրոցի շրջաբակը և բարձրանալով պատշգամբ՝ պէտք ե-  
ղած դասարանն անցնելու, ինչ որ ժամանակի կորուստ էր մի-  
այն: Պատշգամբը թոյլ չէր տալիս նաեւ, որ գետնայարկի խո-  
նաւ սենեակները բաւականաչափ օդ ու լոյս առնեն, մինչդեռ  
այդտեղ էին ճաշում աշակերտները:

Նոր դասարանները գործածելի դարձան Նոյ. 22-ին, մինչ

մար եւ 3) Օր. Ս. Գրքեսերեան իբր օգնական վարժուհի՝ Մանկա-  
պարտեզի համար: Վերջին երկու պաշտօնեաներն ամենաժեշտ էին,  
նկատելով որ նախակրթարանի 550 աշակերտները եւ Մանկապար-  
տեզի 200 փոքրիկները վերահսկող ջուրէին, երկու հաստատու-  
թեանց մէջ այնքան մնայուն դասատուներ կային, որքան դասարան  
ուրիշներ, այնպէս որ՝ երբ որեւէ դասատու բացակայում էր, չկար  
մէկը որ փոխարինէր նրան՝ դասարանին հսկելով: այս աշխա-  
տանքը մինչեւ Դեկտ. յաճախ ստիպուած էր տնօրէնը կատարել,  
յետաճգնով իր տեսչական գործերը:

այդ անհնարին խնդրում կար վարժարանին մէջ, թէև Առաջնորդարանի երկու սենեակները օգտագործւում էին իբր դասարան, բայց բաւական չէին խնդրման առաջին անհերքու։ Երկու հոգինոց նստարանի վրայ տեղաւորւած էին 3—4 հոգի, որով անհնարին էր գրաւոր աշխատանք կատարել և կարգ պահպանել դասարաններում։ Նոյնատեսակ մի վիճակ ունէր և՛ Մանկապարտէզը, ուր ճաշարանի երկու սենեակները գրաւել էին գաղթական ընտանիքներ։ Այդ սենեակներից մէկը հազիւ ազատւեց Նոյ. 22-ին և հականեխելով՝ յատկացւեց Տարր. Բ. բաժանման երրորդ զուգընթացին։ Մինչ այդ՝ Տարր. Բ. բաժանման երկու զուգընթացներից մէկն ունէր 62, իսկ միւսը 58 աշակերտ, որ անպտուղ էր դարձնում ամէն աշխատանք։ Միւս սենեակում տեղաւորւած գաղթական ընտանիքն անպատկառ յամառութեամբ մնաց մինչև Մայիս, որով Մանկապարտէզի փոքրիկներն ստիպուած եղան ձաչելու ամբողջ տարին իրենց միջանցքում և սանդուխտի տակ։ Բարձր. Ա. դասարանը տարւայ սկզբին երեք տեղ փոխեց. մօտ մի ամիս նա սեղմւած էր ուսուցչանոցինեղ ու մթին սենեակում, երբեմն ստիպուած լինելով իր դասերը բացօթեայ առնելու։ Զբօսանքի պահերին ուսուցիչները երկար ժամանակ նստելու տեղ չունեցան։

Շինութեան և քանդակածքի նիւթերը թափւած էին վարժարանի շրջաբակերի մէջ. յատկապէս անգործածելի էր աղջիկների խաղաղալը, որով 550-ի հասնող երկսեռ աշակերտութիւնը զբօսանքի պահերին ստիպուած էր խռնելու վարժարանի բակերից մէկի մէջ միայն, ինչ որ չէր կարող կարգապահութեան նպաստել։ Երկրորդ կիսամեակի սկզբին միայն նստաւոր դարձաւ մաքրել և օգտագործել աղջիկների խաղաղալը։

Տարւայ ընթացքին աստիճանաբար կարգի եկաւ այս խառնակ վիճակը, բայց բաւական երկար տեւեց, նոր դասարանների օգտագործումով աշակերտութեան թիւը զգալապէս նօսրացաւ դասարանների մէջ։ Արանի կառուցումով դիւրացաւ դասարանների հսկողութիւնն ու այցելութիւնը. քանի որ նրանց դռները բացւում էին սրանի վրայ կամ նրան հաղորդակից միջանցքների մէջ։ Վարժարանի ներքնայարկում երեք մթին, խոնար և անգործածելի սենեակներ միացւելով՝ կազմեցին մի ընդարձակ նոր սրահ, որ յատկացւեց ճաշարանի և ուր չինեց անշարժ բեմ՝

աշակերտական հանդէսների համար։ Մանչերի և աղջիկների խաղաղալըրը զատւեցան և խոնումը դադարեց, վարժարանը բնականոն վիճակ ստացաւ և վերջնապէս կարգի եկաւ Զատիկից յետոյ միայն, որ ասել է ուսումն. տարւոյ վերջերին։

Այս աննպաստ պարագաների մէջ էր, որ մենք պէտք է ֆիզիքական, բարոյական և մտաւորական կրթութիւն տայինք մեր աշակերտութեան։ Նոր սերունդի կրթութեան մէջ վարժարանը կարեւորագոյն ազդակներից մէկն է, բայց միակը չէ, ձիշտ է, որ վարժարանն այն միջավայրն է, ուր աշակերտն ինն ամիս շարունակ անց է կացնում իր կեանքի մէկ երրորդը (օրական 7—8 ժամ), բայց իր կեանքի մեծ մասը նա ապրում է ծնողների հետ և վարժարանից դուրս։ Իր կրթութիւնը նա ստանում է ո՛չ միայն վարժարանում, այլև վարժարանից դուրս։ Մենք անկարող ենք անմիջական և զօրաւոր ազդեցութիւն ունենալ երեխաների արտադպրոցական միջավայրի վրայ. բայց վարժարանի իբրև միջավայր՝ մեր իրաւասութեան և անմիջական ազդեցութեան տակ է, համայնքի, Ազգ. Վարչութեան և կրթական մարմնի պարտականութիւնն է այդ միջավայրը հաճելի, առողջապահիկ և կրթիչ դարձնել նրա մատաղ և հոսուն բնակչութեան համար։

Նւ ամէնից առաջ վարժարանի շէնքն է, որ ամէն տեսակէտով պէտք է նպաստաւոր լինի այն բնակչութեան համար, որ ներս է խուժում ամէն առաւօտ, և այն աշխատանքի համար, որ կատարւում է այնտեղ։ Ընթացիկ ուսումն. տարւայ Փետրւար ամսին Տնօրէնութիւնը մանկավարժական տեսակէտից յատուկ քննութեան ենթարկեց թէ՛ Նախակրթարանի և թէ՛ Մանկապարտէզի շէնքը. արդիւնքը կարելի է տեսնել զեկուցմանս կցած թիւ 1, 2, 3, 4 տախտակների վրայ։ Երկու շէնքն ևս քննւած են թէ՛ բացարձակ և թէ՛ յարաբերական տեսակէտով, այսինքն սենեակներն զնահատուած են թէ՛ իբր օրինակելի դասարան և թէ՛ այն աշակերտների թւի համեմատութեամբ, որ Փետրւար ամսին եղած են այնտեղ։ Երկու տեսակէտով էլ թէ՛ Նախակրթարանը և թէ՛ Մանկապարտէզը դպրոցական շէնքեր չեն։

երկու շէնքի մէջ ևս չկայ մի դասարան, որ լինէր օրինակելի, այսինքն ունենար 10 մէթր երկարութիւն, 8 մէթր լայնութիւն և 4.50 մէթր բարձրութիւն, որ ասել է՝ 360 մէթր խոր. օդ. չկայ մի դասարան, որի ապակիների մակերեւոյթը յատակի մէկ երրորդը կամ առնուազն մէկ քառորդը կազմէր (այսինքն 27—20 քառ. մէթր լինէր)։

Զլինելով օրինակելի մեր երկու շէնքերը անբաւարար են նաև այն աշակերտութեան համար, որ ունինք։ Այսպէս՝ Մանկապարտէզի սենեակներից վեցը գործ են ածուում իբր դասարան. այդ վեց սենեակները միասին 609 խոր. մէթր օդ ունին, որ ասել է կարող են գոհացում տալ 101 աշակերտի օդի պահանջին, հաշուելով ամէն մէկին 6 խոր. մէթր օդ. մինչդեռ տարւայ սկզբին մենք ունէինք 212, իսկ տարւայ վերջին 200 աշակերտ, ասել է՝ աւելի քան 100 աշակերտ զրկւած էին օդից կամ որ նոյնն է՝ բոլոր աշակերտները բաւարար չափով օդ չունէին շնչելու. և այդ այն տարիներում երբ նրանց մարմինը աճում է արագ։ Նոյն վիճակի մէջ է և նախակրթարանի շէնքը, որի 15 դասարանները 2598,40 խոր. մէթր օդ ունին, այսինքն կարող են առնել 416 աշակերտ, մինչդեռ տարւայ սկզբին մենք ունէինք 556, իսկ տարւայ վերջը՝ 522 աշակերտ, ասել է աւելի քան 100 աշակերտ զուրկ էին օդից կամ բոլորն էլ բաւարար քանակութեամբ օդ չունէին. Փորձով երեւաց, որ օդն ապականուում էր շուտով մինչև իսկ այն օրերին, երբ պարագմունքները կատարուում էին բաց պատուհաններով։ Վարժարանի մէջ երեք դասարաններ կան, որ օդի տեսակէտով գոհացուցիչ վիճակ ունին<sup>\*)</sup>։ Աւելորդ է խօսել այն մասին թէ որքան մեծ նշանակութիւն ունի օդի քանակութիւնը առողջապահական և դասաւանդական տեսակէտով։

Վարժարանի երկու շէնքերը քննւած են նաև յատակի ընդարձակութեան և լոյսի քանակի տեսակէտով։ Օրինակելի վարժարանի մէջ ամէն մի աշակերտի պէտք է ընկնի 1,50 քառ. մ. յատակ և 26 ս. մ. ապակի. եթէ այս տեսակէտից նայենք մեր

\*) Թիւ. 3 տախտակի վրայ՝ այն քան շաննների դիմաց, որ ցոյց են տալիս քի որքան օդ է պակտում այդ դասարաններին. դրւած է խաչ նշանը։

դպրոցական շէնքերին՝ կը տեսնենք, որ չունինք և ոչ մի օրինակելի դասարան. իսկ եթէ այդ շէնքը գնահատենք մեր ունեցած աշակերտութեան թւի համեմատութեամբ՝ կ'երեւայ, որ անբաւարար են նաև այդ տեսակէտից։ Այսպէս՝ Մանկապարտէզի վեց դասարաններում յատակները 149,16 ք. մ. են, որ ասել է ամենաշատը 100 աշակերտ կարող են տեղաւորւել այնտեղ. մինչդեռ մենք ունեցած ենք 200—212 աշակերտ։ Նոյն վեց դասարանն ընդամէնը 16 պատուհան ունին (հաշուելով ոչ միայն ձախ, այլև բոլոր կողմերի պատուհանները). սրանց ապակիների մակերեւոյթն է 21,76 ք. մ., որ նոյն է թէ բաւարար լոյս են տալիս 90 աշակերտի համար։ Նոյն շէնքի մէջ էր և ձեռագործի դասարանը, որ զարհուրելի պակեր է տալիս. այդ փոքրիկ ու խոնաւ սենեակն ընդամէնը ունէր մէկ պատուհան 1,35 ք. մ. լոյսով, որ ասել է 5 աշակերտի համար, մինչդեռ այնտեղ կար էին անում 15—20 աշակերտուհի։

Նախակրթարանի շէնքն իր 15 դասարաններով նոյն անմխիթար վիճակն ունի. այդ սենեակների յատակները 534,50 ք. մ. են, այսինքն կարող են տեղ տալ 356 աշակերտի, մինչդեռ մենք ունեցանք 522—556 աշակերտ։ Գալով լոյսին՝ նախակրթարանն ունէր 46 լուսամուտ (հաշուելով բոլոր կողմերի պատուհանները), որոնց ապակիների մակերեւոյթը հաւասար է 111,32 ք. մ. -ի։ Այսքան ապակին կարող էր բաւարար լոյս տալ 428 աշակերտի, ասել է մնացած 89—123 աշակերտները զուրկ են լոյսից։ Այս շէնքի մէջ 4 դասարան կար միայն, որ եղած աշակերտութեան համար բաւարար լոյս ունէր, եթէ հաշուենք բոլոր լուսամուտներն անխտիր։ Իսկ եթէ հաշու առնենք միմիայն ձախ կողմի պատուհանները, ապա չունենք և ոչ մի դասարան, որ բաւարար չափով լուսաւոր լինի։ Լոյսի պակասը ոչ միայն ազդում է աշակերտի տեսողութեան վրայ, այլ մանաւանդ տրամադրութեան վրայ. լուսաւոր սենեակում աշակերտն աւելի աշխոյժ է և հաճոյքով է հետեւում դասերին։

Առողջապահիկ չէին նաև վարժարանի պէտքարանները, որ հին շէնքեր են. մէկն անյարմար տեղադրութեամբ և երկուսն էլ կեղտոտ պահւած։ Ծաշարանի սենեակները, որ գետնայարկի մէջ են, մուտ էին ու խոնաւ. պատշգամի վերացումով ներկնայարկի պատերը արեւի ազդեցութեան ենթարկուեցան և յուսով ենք

թէ պիտի չորնան ժամանակի ընթացքին: Գալով ձաշարանների լոյսին, թէեւ պատուհանները մեծացան, բայց սրահի կառուցումով լոյսի քանակը անփոփոխ մնաց. այս չարիքը սակայն չատ մեծ չէ, նկատելով որ երեսաներն այնտեղ մնում են ոչ աւել քան կէս ժամ:

Շէնքի այս թերիները ընդմիշտ վերացնելու արմատական միջոցը դպրոցական նոր շէնքի կառուցելն է Մարզարանի լայնարձակ հողի վրայ, բաւարար ընդարձակութեամբ և գիտութեան վերջին պահանջների համեմատ: Այսպիսի մի շէնք մեր համայնքը կարող էր կառուցել, եթէ զուրկ չլինէր ազգային արժանապատուութեան առողջ գգացումից: Ազգային եկամուտներն այնքան շատ չեն, որ և՛ ընթացիկ ծախսերը հոգացեն և՛ սեփական միջոցներով ընդարձակ և անհաստեթարեր շէնքեր կառուցեն: Հայ հարուստները ո՛չ ազգային կենդանի գգացում ունին, ո՛չ հոգեկան մշակոյթ. դրամ ունին, բայց չգիտեն «առնել բարեկամս ի մամոնայէն անիրաւութեան»: Բարեկեցիկ տարրերը միասնական աշխատանքի ո՛չ ճաշակն ունին, ո՛չ ընդունակութիւնը. ամբողջ համայնքը կլանւած է առօրեայ հոգսերով. հոգեկան թռիչք չունի: Այս տարի պ. Կ. Մելքոնեան խոստացաւ Մանկապարտէզի յատուկ շէնք կառուցել. իր կողմից Դեկտ. 17-ին ճարտարապետ պ. Կարօ Պալեան այցելեց դպրոց, տեսաւ Մանկապարտէզի յատկացւած հողը, ներկայացրեց Տնօրէնութեան իր մշակած նախագիծը, լսեց դիտողութիւններ: Դժբախտաբար այդ խոստումն այս տարի կատարելու չէ և մենք նորից մնալու ենք Մանկապարտէզի հին շէնքի մէջ, որ արեւելեան կիսաւեր խան է աւելի, քան 5—7 տարեկան մանուկների ուսման վայր. իր խարխուղ ու խղճուկ տեսքով, իր մաշւած աստիճաններով, իր մթին ու անմխիթար սենեակներով, նա կարող է միմիայն մռայլ արամազրութիւն արթնացնել մանուկների պայծառ հոգու մէջ և ոչ թէ նրանց մտքի և զգացումի արթնացման տեղ և փիղիքական անման միջավայր լինել:

Երբ հարուստ դասն անհաղորդ է ազգային իղէալներին, բարեկեցիկ դասն անփոփւած է իր պատեանի մէջ, իսկ համայնքը անտեսապէս յետամնաց է, Ազգային վարչութիւնն ստիպւած է կարկատանի քաղաքականութեան հետեւել և մեծ ու հիմնական ձեռնարկների համար դրամ չունենալով՝ եղած հինը յարմար-

ցնել նոր պահանջներին: Յանկանալով ստեղծել դպրոցական տանելի վիճակ՝ Ազգ. վարչութիւնն այս ամառ նախակրթարանի վրայ կառուցելու է հինգ նոր սենեակ, ծածկելու է սրահի կտուրը, հիմնովին նորոգելու է պէտքարաններից մէկը և կառուցելու է մի նոր պէտքարան: Միաժամանակ առաջին յարկի երկու սենեակները միացնելով՝ շարժական պատով կցելու է սրահին, որով կ'ունենանք մի բաւական ընդարձակ դահլիճ: Այս շինութեանց հետեւանքով մենք կ'ստանանք չորս նոր դասարան. մէկը ձեռագործի, երկրորդը նկարչութեան, երրորդը նոր բացւելիք ութերորդ դասարանի և չորրորդը Տարրական Բ. բաժանման երրորդ զուգընթացի համար, որ այս տարի տեղաւորուած էր Մանկապարտէզի շէնքում: Այսպիսով նախակրթարանի բոլոր դասարանները նոր շէնքի մէջ կ'ամփոփուեն: Դահլիճը կ'օգտագործւի հանգէսների և անձրև օրերը աշակերտներին ապաստան տալու համար:

Սակայն դրանով մեր կրթական կարիքները լիակատար գոհացում դեռ չեն ստանայ: Անհրաժեշտ է, որ 1) շրջաբակի մի մասը ձեղունով ծածկւելի անձրև օրերը մարզանք անելու համար: 2) Սրահի կտուրը ծածկելով տեսչարանն և ուսուցչանոցը, որ շատ նեղ ու կիսամութ սենեակներ են՝ պիտի մթնեն լիովին. անհրաժեշտ է ուրեմն երկու նոր սենեակ: 3) Մեզ պէտք է մի յատուկ սենեակ բժշկի համար, ուր կարելի է տեղաւորել և գրպորոցական դեղարանը. այս տարի մեր բժիշկն աշակերտներին ստիպւած էր քննել տեսչարանի մէջ. շատ անգամ անօրէնի հետ խօսող անձանց ներկայութեան: 4) Պէտք է ունենալ մի յատուկ սենեակ աշակերտական և մանկավարժական գրադարանի համար, ուր կարող են պահւել և քարտէսներն ու պատկերները, որ այս տարի տեղաւորուած էին տեսչանոցի և ուսուցչանոցի մէջ: 5) Անհրաժեշտ է մի յատուկ սենեակ գիտութեան դասերի համար՝ իր յատուկ կահաւորումով և յարմարութիւններով — ջուր, գազ են: 6) Մեզ պէտք է նաև մի յատուկ սրահ երաժշտութեան դասերի և խմբական երգեցողութեան համար. մեր սրահը դասարանների մէջտեղը բռնելով՝ անյարմար է այդ նպատակին. նախ նա մի ընդարձակ միջանցք է իրօք և ապա երգ աւանդել այդ սրահում՝ կր նշանակէ վարժարանի բոլոր դասերը խանգարել:

Քանի որ դպրոցական նոր և ընդարձակ շէնք կառուցելն անհնարին է՝ այս նեղ վիճակից դուրս գալու միակ բանաւոր ելքն այն կը լինէր, որ Առաջնորդարանի համար յատուկ շէնք կառուցէր և նրան յատկացւած հինգ սենեակները տրամադրէին վարժարանին: Վերջապէս պէտք է մտածել և իններորդ դասարանի մասին, որ հաւանօրէն կը բացւի մի տարի յետոյ: Արդէն մեծ անյարմարութիւն է, որ այդ երկու հաստատութիւնները նոյն շէնքի մէջ են տեղաւորւած. միեւնոյն աստիճաններով են բարձրանում թէ՛ աշակերտ—աշակերտուհին, թէ՛ Առաջնորդարանի խնդրատուն. հինգ նոր սենեակների կառուցումով այդ աստիճանների վրայ աւելի մեծ խռնում կ'առաջանայ: Շատ անգամ աշակերտները վկայ են դառնում այցելուների յարուցած աղմուկին և անկարգութեան: Դպրոցի և Առաջնորդարանի գրխաւոր մուտքը նոյն դռնից լինելով՝ անհնարին է դուռը գոցելով վարժարանն ամփոփ վիճակի մէջ դնել պարագմունքի ժամերին: Այս տարի հարկադրեցանք աշակերտներին արգիլել, որ այդ դռնով երթեւեկեն և նրանք վարժարան մտնելու համար ստիպւած էին երկար պտոյտներ անելու: Առաջնորդարանի նոր շէնքը կարելի էր կառուցել շատ համեստ ծախսով. և եթէ մեր համայնքի մէջ մի քանի սրտցաւ ունեւորներ հանդէս գան և պէտք եղած գումարը փոխարինաբար և տոկոսով տրամադրեն Ազգ. Վարչութեան, վերջինս կարող է ձեռնարկել շինութեան, որով մի քանի խնդիր միանգամից կը լուծեն:

Շէնքից յետոյ ֆիզիքական կրթութեան կարեւոր պայմաններից մէկը թէ՛ աշակերտի եւ թէ՛ վարժարանի մաքրութիւնն է: Այս տարի մեր վարժարանն ունեցաւ հինգ նոր դասարան, մի ընդարձակ սրահ, մի նոյնքան ընդարձակ գետնայարկ և մի նոր սեղանատուն, մինչդեռ տնտեսների թիւը մնաց անփոփոխ: Չմրանօրերը կարճ լինելով՝ դժուար էր այդքան սենեակ խնամքով մաքրել: Դասարանների մէջ պէտք է ելեկտրական լոյս անցկացնել, որ տնտեսները կարենան մութին ևս աշխատել: Պէտք է հրաւիրել և մի նոր տնտես: Առաջիկայ տարին մտադիր ենք դասարանների մաքրութեան հոգսը մասամբ թողնել աշակերտներին, որ վարժեան ինքնագործունէութեան և իրենց բնական վայրի մաքրութեան հոգ տանելուն:

Առատ փոշին ու քրտինքը Եգիպտոսի մէջ արագութեամբ

կեղտոտում են աշակերտների հագուստն ու մարմինը: Աշակերտութեան կէսից աւելին չքաւոր դասի պատկանելով՝ ոչ հնարն ունին և ոչ ճաշակը մաքրասիրութեան: Ամէն օր, դասերից առաջ, դաստիարակներին տրամադրւած էր 15 վայրկեան՝ երեսաների մաքրութիւնը ստուգելու համար: Չենք կարող ասել թէ փայլուն հետեւանքի հասանք այս ուղղութեամբ. եթէ մասամբ այստեղ դեր խաղաց ոմանց անփութութիւնը, ապահովաբար փոքր ազդակ չեղաւ շատ ծնողների յամառ անմաքրութիւնը: Յուսով ենք առաջիկայ տարին աւելի միտիւարական արդիւնքի հասնել: Մեղ թւում է, որ մեծ բարիք կը լինէր եթէ դպրոցի մէջ տաք ու սառ ջրի տուչեր հաստատէին. այն ժամանակ երեսաների մաքրութիւնը չէինք վստահի նրանց անփոյթ ծնողներին և մեծապէս նպաստած կը լինենք աշակերտների առողջութեան:

Առողջութեան տեսակէտով սակայն ամէնից կարեւորը սնունդըն է, որ դպրոցի հետ անմիջական կապ չունի, բայց մեծապէս ազդում է կրթական գործի վրայ: Երեսաները 6—7 ժամ մտաւորական աշխատանք ունին. միաժամանակ նրանք ապրում են իրենց ֆիզիքական աճման շրջանը: Անհրաժեշտ է, որ նրանք առատ սնունդ ստանան, որ կարենան տոկալ ոչ միայն դպրոցական աշխատանքին, այլեւ պաշար ունենան աճելու համար: Մեր աշակերտների մեծագոյն մասը անբաւարար սնունդ է ստանում: Մեծ մասը նիհար է և դունաթափ թոյլ մկաններով եւ յոյլ շարժումներով, աւելի նեարւային աշխոյժ ունեն, քան առողջ կայտառութիւն: Այս տարի անօթութիւնից ուշաթափելու երկու դէպք պատահեց. այս դէպքերը ախտանիշն են աշակերտների վատառողջ կացութեան: Շատ ծնողներ քիչ ուտելը առաքինութիւն և խնայողութիւն համարելով՝ տգիտաբար փեսում են իրենց երեսաների առողջութեան և յառաջդիմութեան: Ոմանք գոհանում են երեսայի բուռը 2—3 թարիֆա դնելով, որ սրանք ծախսում են մի կտոր հաց ու քաղցր բան դնելու: Այս տեսակ անբաւարար սնունդ ստացող երեսաներից ի՛նչ աշխատանք և ի՛նչ ճիգ կարելի է սպասել: Ինքնապաշտպանութեան առողջ բնազդը թելադրում է երեսաններին անուշադիր լինել դասերին. դրա համար նրանք պահեստի ուժ չունեն: Առաջին պահն է միայն, երբ աշակերտները նորմալ ուշադրութեամբ հետեւում են

գասաւածողութեան: պատահած են, սակայն, երեխաներ, որոնք նոյն իսկ այդ պահին յոգնած երեւոյթ են ունեցած:

Մարզանքի ժամերն անցնում են առանց աշխոյժի և կայտառութեան: Երբ զաստուղներն աշխատում են իրենց աւանդած նիւթը գրաւիչ դարձնել, նրանց ջանքերը յաճախ մնում են ապարդիւն: Եւս ջանքերի հանդէպ աշակերտները յիշեցնում են յոգնած գրաստներ, որ մտրակի տակ մի վայրկեան աւելի ճիգ անելով՝ դառնում են աւելի ուժասպառ: Այսպիսով՝ մանկավարժական մեծարժէք ճիգեր սպասած արդիւնքը չեն տալիս ծնողների տէչտ ընչասիրութեան և հանրութեան յանցաւոր անտարբերութեան պատճառով: Եթէ բարեկեցիկ ծնողները լաւ սնունդ տային իրենց զաւակներին և հանրութիւնը սրտցաւ լինէր չքաւոր աշակերտութեան հանդէպ՝ մեր դպրոցը շատ փայլուն վիճակ կ'ունենար: Մեր երեխաներն ընդհանուր առմամբ ուշիմ են: նրանց պակասում է կորով՝ աւեապէս աշխատելու համար: Աշակերտներից օմանք անում են ինչ որ մարդկօրէն հնարաւոր է, բայց զանգւածը ընդհանուր առմամբ բաւարար է կամ միջակ, մինչդեռ կարող էր լինել լաւ ու լաւագոյն: Մնունդի պակասն ազդում է նաև աւանդած նիւթի քանակի վրայ: Միայն լաւ սնուող ուղեղն է, որ կարող է շատ բան ստանալ ու մարտել: Մնունդի տեսակէտով նորմալ աշակերտութիւն չունենալով՝ մենք ստիպւած ենք քիչ աւանդել ու յաճախ կրկնել, որ կարենան իւրացնել:

Ազգային իշխանութիւնը, որ հազիւ կարողանում է իր ընթացիկ ծախսերը հոգալ, հնար չունի այս խնդրին մի բանաւոր լուծում տալու: Հանրութեան պարտականութիւնն է այս հարցի վրայ ուշադրութիւն դարձնել, ստեղծելով մի մարմին, որ նպատակ ունենար աշակերտներին աժան, բայց սննդարար ճաշ տալու: Փանի որ ամէն ծնող լաւ թէ վատ հոգում է իր զաւակի մասին՝ անխօրհուրդ բան կը լինէր ձրի ճաշ բաժնել երեխաներին: Բայց քանի որ բաւարար ճաշի համար մի քիչ աւելի դրամ կը պահանջւի քան կարող են շատ ծնողներ տալ, յիշեալ մարմինը կարող էր պակասորդ դուրսբեր ձեռք բերել բարեսէր մարդկանցից: Կերակուրների ցանկը կարելի էր պատրաստել բժշկի խորհուրդով: Եթէ մենք հնար ունենանք մեր աշակերտներին դպրոցի շէնքում ճաշ տալու՝ այն ժամանակ կարող ենք

արգիւել, որ երախաները ճաշու իրենց տները դնան: Դրանով երկու անգամ պակաս անցած կը լինեն քաղաքի փողոցներից, որ միմիայն բացասական ազդեցութիւն ունի նրանց վրայ: Առաջիկայ տարին մտադիր ենք ծնողական ժողով դուրսբերել և այս խնդիրները յանձնել նրա ուշադրութեան:

Երեխաների ֆիզիքական կրթութեան լաւագոյն միջոցներն են խաղն ու մարզանքը, երկուսն էլ պէտք է յարատեւ ու կարգաւոր լինեն իրենց բարերար ազդեցութիւնն անելու համար: Մարզանքի դասերը սովորաբար պատշաճութեան խնդիր են եւ շատ աւելի նպատակ ունեն չքեղ հանդէսներ պատրաստելու, քան երեխաների առողջութեան նպատակելու: Առողջապահիկ մարզանքի պարզ շարժումները պէտք է ամէն օր կատարւեն, որ արմատանան իբր սովորոյթ և գործադրւեն նաև դպրոցն աւարտելուց յետոյ: Այս տարի մեր դպրոցում առաջին երկու կարգերը մարզանքի դասեր չունէին, իսկ միւս կարգերն ընդամէնը եօթ պահ դաս ունէին՝ մանչ և աղջիկ դասազատ խմբերով: Նշանակում է ամէն աշակերտ շաբաթական միայն մի անգամ մարզանքի դաս ունէր, որ բաւարար էր իբր վարժութիւն, բայց շատ քիչ էր իբր առողջապահիկ մարզանք:

Մարզանքն անհրաժեշտ է մանաւանդ մեր աշակերտներին, որ մեծ մասամբ չքաւոր դասերից լինելով՝ ապրում են նեղ ու կեղտոտ փողոցներում և տուփաձեւ սենեակների մէջ՝ անբարար օդով ու լոյսով: Վարժարանի համեմատաբար ընդարձակ բակն է միայն, որ հնար է տալիս նրանց առատ օդ շնչելու և ազատ շարժելու և եթէ մենք կարենանք մարզանքը, սնունդն ու լոգանքն իրար միացնել՝ նկատելի չափով մեղմած կը լինենք չքաւորութեան և ծնողների կծծիութեան պատճառած չարիքը: Միւս կողմից խաղերը, որ լաւագոյն միջոցն են ֆիզիքական կրթութեան, մենք ստիպւած էինք թողնել երեխաների նախաձեռնութեան, տրամադրելի դրամ չունենալով յատուկ մարդ հրաւիրելու իբր խաղերի հսկիչ և կազմակերպող: Մենք արինք ինչ որ կարողացանք. քաջալերեցինք ֆուտբոլի խաղը դասերից ազատ պահելին. սերտողութեան ժամերին՝ ազատելու համար երեխաներին դասարանների ապականւած օդից և նստուկ վիճակից՝ յաճախակի ուղարկեցինք «կամք»ի մարզարանը բաց օդի մէջ ազատ խաղալու: Այս միջոցները կարծում ենք փոքր ինչ աշ-

խոյժ մտքերին աշակերտութեան մէջ և նպաստեցին կարգապահութեան, բնականոն ելք տալով շատերի կուտակած եռանդին:

Այս տարի վարժարանի մէջ ոչ մի վարակիչ հիւանդութիւն չունեցանք: Վարժարանիս բժիշկ Դոք. Լեւոնեան քննեց ու դարմաններ նշանակեց հիւանդ աշակերտներին. լուրջ դէպքերում հրաւիրելով նրանց իր տունը: Տարւայ ընթացքին, խաղերի ժամանակ, մի քանի երեխաներ թեթև վնասումներ ունեցան, որոնց նախնական դարմանը տարաւ վարժարանիս դասատու Տիկ. Զ. Պողոսեան: Հիւանդ կամ վնասումներ ստացած երեխաները փոխադրւած են տուն, շատ յաճախ կողքով, վարժարանիս անտեսի կամ հասակաւոր աշակերտների ընկերակցութեամբ:

Ուսումն. տարւայ ընթացքին աշակերտները առողջութիւնն ընդհանուր առմամբ բաւարար էր, ուստի բացակայութիւն շատ չունեցանք: Պէտք է, սակայն, ջանալ, որ նրանց առողջական վիճակը փայլուն լինի: Մեզ պէտք է մի քաջաոգջ սերունդ, որ կարելի է ստեղծել առատ սնունդով, անթերի մաքրութեամբ և յաճախակի մարզանքով ու խաղով: Ծնող և Ազգ. վարչութիւն պէտք է ձեռք ձեռքի գործեն այս ուղղութեամբ և ապահովին հանրութեան աջակցութիւնը: Ազգ թէ անհատ այնքան աւելի կարող են յաջողել կեանքում, որքան առողջ են մարմնով, առողջութիւնն ինքնին միջին առաքինութիւն է և միջին իմացականութիւն:

Կարեւորութեան կարգով երկրորդ տեղը բռնում է աշակերտների բարոյական կրթութիւնը: «Բարոյական կրթութիւն» իսկապէս նշանակում է նկարագրի կազմութիւն. իսկ նկարագիրը ո՛չ թէ խօսքով, այլ գործով է կազմւում: Մեր դպրոցների մէջ բարոյական կրթութիւնը համարեայ նոյնանում է դպրոցական կարգապահութեան հետ և վարքի թւանշանը որոշում է աշակերտի բարոյականը: Ոմանք կարծում են թէ դպրոցը մարդիկ է պատրաստում կեանքի համար և «կեանք» ասելով հասկանում են վարժարան աւարակուց յետոյ եկող տարիները. այսպիսով տարրական, երկրորդական և բարձր կրթութիւն ստացող մարդկանց համար «կեանքն» սկսւում է տարբեր ժամանակ... բայց



կեանքն սկսւում է ծնած օրից և տեւում է մինչև մահւան օրը. ամէն հասակ կեանք ունի, բայց իր կեանքը և այդ կեանքի ընթացքին է, որ մշակւում է նկարագիրը: Վարժարանը մի կայան է մարդու կեանքի ճանապարհին. այդ կայանի մէջ եւս մշակւում և արտայայտւում է մարդուն նկարագիրը, կարգապահութիւնն այդ արտայայտութիւններից մէկն է: Բայց նկարագիրը մշակւում և արտայայտւում է նաև խաղի ընթացքին, սեղանատանը, ընկերների հետ ունեցած յարաբերութեան ժամանակ, դպրոցական — հանրային գործերի մէջ — զբօսանքի, հանգստակութեան, հանդէսի ևն.: Կարգապահ աշակերտ ունենալ՝ դեռ չի նշանակում բարոյապէս կիրթ մարդ պատրաստել: Դպրոցական կեանքի շատ կողմերը, որ մշակում են երեխաների նկարագիրը, ընդհանրապէս վրիպում են դաստիարակների աչքից. նրանք հետամուտ են այս ամէնին, որ պատրաստում է կարգապահ աշակերտ և այդ կարգապահութիւնը բաւարար է համարւում, եթէ նպաստում է դասարանի հանգարտութեան և անաղմուկ դասաւանդութեան: Սա բարոյական կրթութիւն չէ, այլ կարգապահական վարժութիւն:

14841

Այս առիթով պարտք ենք համարում մեր տեսակէտը պարզել կարգապահութեան մասին: Մենք կարծում ենք, որ դպրոցի և դասարանի անկարգութիւնը երկու հիմնական պատճառ ունի. առաջինը դասատուն է, երկրորդը աշակերտի յուտակուած եռանդը: Պատիժներով ու սպառնալիքով հնարաւոր է մեքենական կարգապահութիւն ստեղծել վարժարանի մէջ, բայց այդ տեսակ կարգապահութիւնն անարժէք է բարոյական և կրթական տեսակէտով: Երեխաները չուտով յարմարում են դպրոցական խիստ կարգերին և հանձարում են անաղմուկ և աննկատ անկարգութեան հնարներ. այսպիսով փոխանակ գիտակցական, բնականոն կարգապահութեան, ստանում ենք խորամանկութիւն, սուտ ու կեղծիք և համարձակ և արի նկարագրի փոխարէն՝ վախկոտ խաբեբաներ: Սրանից ո՛չ բարոյական և ոչ կրթական շահ կարելի է սպասել: Աւելի լաւ է երեխաները լինեն անկարգ, բայց շիտակ, քան կարգապահ խաբեբաներ:

Մեր ըմբռնած բարոյական կրթութեան վրայ մենք ժամանակ չունեցանք հարկ եղած չափով ծանրանալու, բայց կարող ենք ասել թէ անտես չարինք կրթութեան այս կողմը: Մենք աշխատեցինք պատիժները վերացնել, յորդորելով դասատուներին դրաւիչ դարձնել իրենց դասաւանդութիւնը. մենք ձգտեցինք կր-

թնել աշակերտների ազատ հետաքրքրութեան վրայ: Յորդորը, խրատն ու յանդիմանութիւնը բաւարար զէնք համարեցինք կարգապահութեան և չեմ կարող ասել թէ զղջալու առիթ ունեցանք: Անշուշտ դասատուները բաւական յոգնեցին գերեզմանական հանգիստ չգտնելով դասարաններում, բայց նախ՝ դպրոցը հանգրստավայր չէ դասատուի համար, այլ աշխատանոց և յետոյ՝ կըրթական ամէն նոր սիստեմ իր անցման շրջանի անախորժութիւններն ունի: Աշխատեցինք ներշնչել դասատուներին, որ յաճախ յիշեն իրենց աշակերտութեան տարիները և երեխաներից չպահանջեն այն, ինչ որ իրանք չեն արած և անել չէին կարող: Ամէն հասակ իր պահանջներն ունի. գիտութիւնը խորթ բան է մանուկի համար և սիրով ու համբերութեամբ միայն կարելի է նրան վարակել այդ ցաւով: Երեխան աճում է մարմնով. նրան պէտք է խաղ, մարզանք, շարժում, աղմուկ. նա իր «արեւի ձայնն է աճում», ինչպէս ասում է ժողովուրդը: Պէտք է ջանալ ա՛յս ձամբով նրան բան սովորեցնել, աստիճանաբար վարժեցնելով մտաւորական ծանր ու լուրջ աշխատանքի: Եւ այն դասատուները կը յաջողեն, որ իրենց դասերը կը դարձնեն հաճելի դրոյց ու ժամանց:

Անկարգութեան երկրորդ պատճառը, ինչպէս ասի, աշակերտի կուտակւած եռանդն է, որ սպառման կարիք ունի: Շատ երեխաներ բաւական եռանդ ունեն, որ չի սպառուում դասերով և պէտք չէ, որ սպառի: Թիզիքական ու բարոյական կրթութիւնն աւելի կարեւոր է, քան մտաւորականը: Մեզ պէտք են առողջ մարդիկ և ոչ թէ 8—15 տարեկան իմաստասէրներ: Այս կուտակւած եռանդի սպառման լաւագոյն միջոցը խաղերն են, որ եթէ ղեկավարեն, կշռոյթ կը դնեն երեխաների եռանդի սպառման մէջ և դրանով բարոյապէս կը կրթեն նրանց: Մարմնի շարժումները ներդաշնակելով՝ մենք ներդաշնակում ենք և՛ նրանց հոգին: Այսպէս կը ստեղծւի բնականօն կարգապահութիւն առանց պատժի և սպառնալիքի: Այս կողմի վրայ մենք բաւական ուշադրութիւն չդարձրինք այս տարի. առաջիկային, յուսով ենք, յատուկ ուշադրութեան նիւթ դարձնելու կրթական այս կարեւոր խնդիրը:

Կարգապահութիւնը դպրոցում, դասարանում և խաղերի ժամանակ բաւական չէ իբր փորձառական բով աշակերտների

նկարագիրը մշակելու համար: Մենք աշխատեցինք ստեղծել աշակերտական գործունէութեան նոր ասպարէզներ, ուր նրանք կարող էին հանդէս բերել և մարզել իրենց բարոյական կորովը: Իպրոցի մէջ հաստատեցինք աշակերտական մշտական բեմ, ուր աշակերտները դրին երկու ներկայացում Պ. Չ. Պալեանի գործօն ղեկավարութեամբ: Այս հանդէսներին հրաւիրեցին աշակերտների ծնողները 5—10 դրչ. վճարով և երկու հանդէսների մուտքը՝ 1756 դրչ. յանձնեցաւ Ազգային իշխանութեան. այսպիսով բեմի շինութեան ծախսը աշակերտները հոգացին: Առաջիկայ տարին հանդէսների մուտքը պիտի ծախուի թէ՛ բեմի եւ թէ՛ դասարանական զանազան պիտոյքներ գնելու վրայ: Աշակերտների այս ինքնագործունէութիւնն ստեղծեց մի խանդավառ միջնորդ, արթնացրեց շատերի թմրած կարողութիւնները, մղեց միասնական գործունէութեան և փոքր հասակից վարժեցրեց աշակցել հանրային մի հաստատութեան՝ իրենց կարողութեան համետ սահմանում: Այս ներկայացումները հրապարակային բնոյթ չունէին, այստեղ երեխաները զուարճանում էին խմբովին՝ իրենց ծնողների ներկայութեամբ: Իրենց միասնական աշխատանքով նրանք մի յարկի տակ հաւաքեցին և իրենց ծնողներին, որ ապրում են իրարից անջատ կեանքով:

Աշակերտների բարոյական կրթութեանը նպաստելու դիտումով մենք՝ իբր փորձ՝ հաստատեցինք խնայողական սնտուկ բարձր դասարանների աշակերտութեան համար: \*) Առաջիկային այդ ձեւնարկութեանը պիտի մասնակցեն մի քանի դասարան և սվարի կարգերից, մինչև խնայողական սնտուկը աստիճանաբար դարձնենք համադպրոցական հաստատութիւն: 1924 թ. Յունուարից սկսած աշակերտները խնայում էին շաքարեղան մէկ և աւելի միլիէմ. Ամէն դասարան ունէր իր գանձապահն ու հաշուկալը: Ընդհանուր հաշիւը պահում էր տնօրէնը: Դրամն անմիջապէս յանձնուում էր Ազգային իշխանութեան իբր աւանդ, որ յատուկ հաշիւ էր պահում խնայողական սնտուկի համար: Դրպրոցից դուրս եկող աշակերտները յետ ստացան իրենց խնայած դրամը: Քանի որ այս գործը նոր էր սկսած և խնայած դրամագլուխը մեծ չէր, ընդամենը 786.4 դրչ., ուստի այս տարի այդ

\*) Տես տախտակ քիւ 5:

գումարը գործադրութեան չդրուեց, Առաջիկայ տարին բացելու է դպրոցական խանութ, ուր ծախելու են աշակերտներին պիտանի իրեր՝ շուկայի գնով կամ պակաս արժէքով: Ստացւած շահը բարդելու է գրամագլուխի վրայ և գործի լայնացմանը պիտի ծառայի: Այս ձեռնարկութիւնն ստեղծում է դասարանի միութիւն, վարժեցնում է ճշտապահութեան, հաշակալութեան, պարտաճանաչութեան, համագործակցութեան. յետագային պիտի ստեղծւի համադպրոցական միութիւն անտեսական հիմունքով, որ կը նպաստի աշակերտների բարոյական կրթութեան:

Նոյն նպատակով դպրոցի մէջ հաստատեցինք օրապահութիւն, Ամեն դասարանի մէջ շաբաթական երկու հոգի հերթով հսկում էին դասարանին, մաքրելով գրասեղանների փոշին, հոգալով կաւիճն ու սրբիչը, յայտնելով դաստիարակին բացականչերի անունները, հսկելով դասարանի կարգապահութեան մինչև դասատուն ներս մտնելը: Այս փորձը յաջողութիւն ունեցաւ: Առաջիկային մտադիր ենք մտցնել դպրոցական ինքնավարութիւն՝ կարգապահութեան գործի մեծագոյն մասը թողնելով աշակերտներին, որ պիտի ընտրեն դասարանական և համադպրոցական վարչութիւններ և դրանով վարժուեն պատասխանատու գործերի: Այս ձեւով բարոյական կորովը ազատօրէն կ'արտայայտուի և գործի մէջ կը մշակուի նրանց նկարագիրը: Դպրոցական ինքնավարութիւնը քաղաքացիական կրթութեան գործնական դաս կը դառնայ, վարժեցնելով երեխաներին ժողովներ կազմելու և ղեկավարելու, վիճարանելու և հետապնդելու նրանց գործադրութիւնը:

Բարոյական կրթութեան նկատումներով մենք կարգադրեցինք, որ աշակերտուհիները դպրոցի օգտին ձեռագործ անեն: Մինչ այդ սովորութիւն էր, որ ձեռագործն անեն իրենց համար: Գտնուեցաւ մի ծնող, որ իր զաւակը հանեց դպրոցից, չկամենալով որ իր աղջիկը ազգային հաստատութեան օգտին աշխատէ: Դպրոցն անշուշտ կարիքը չունի աշակերտական ձեռագործների, բայց նրանք փոքր հասակից պէտք է վարժուեն իրենց աշխատանքի մի մասը հանրային նպատակների յատկացնել:

Աշակերտների մէջ կարեկցութեան զգացումն արթնացնելու և գորացնելու համար մենք պահպանեցինք Որբախնամի Գանձանակը Մանկապարտէզի մէջ և քաջալերեցինք աշակերտներին:

որ մասնակցեն Բարեգործական Միութեան և Որբախնամի ձեռնարկած հանգանակութիւններին: Մեր վարժարանի աշակերտութիւնը որբերի օգտին հանգանակած է 11367.60 դրչ., այս գումարը ժամանակին յանձնւած է համապատասխան մարմիններին: \*)

Բարոյական կրթութեան զօրեղագոյն ազդակներից մէկը երկսեռ դրութիւնն է, որ կայ մեր դպրոցում և մնալու է մինչև վերին դասարանները: Այս դրութիւնը պահուում է ո՛չ միայն նիւթական նկատումներով, այլ մանաւանդ իր բարոյական արժէքի համար: Երկսեռ դրութեամբ մանչերը փոքր ինչ մեղմանում են և աղջիկները դառնում են արի: Եգիպտոսի ապականւած մթնոլորտի մէջ, որին ենթակայ են հասակաւորները, կրթական այս դրութիւնն է միայն, որ կարող է բարոյական առողջ մթնոլորտ ստեղծել: Շատերն իրենց յանցաւոր մտածումները վերագրելով մանուկներին և պատանիներին՝ ենթադրում են արարքներ, որ իրանք կ'անէին, եթէ փոքրերի տեղը լինէին: Բայց նրանք մոռանում են, որ եթէ փոքր լինէին յանցաւոր մտքեր չէին ունենայ, ինչպէս չեն ունեցած ժամանակին: Իսկ այսօրուան մտքերով նրանք հասակն առած մարդիկ են արդէն և տեղ չունեն աշակերտական նստարանի վրայ: Ինչպէս վատը, այնպէս էլ լաւը վարժութեան խնդիր են: մարդիկ գող և աւազակ չեն ծնւում, այլ դառնում են: Վարժարանը լաւ ունակութեանց մի մարզավայր է, ուր երկու սեռի երեխաներ իրար հետ ապրելով և ուսանելով՝ վարժուում են իրար, սովորում են փոխադարձ յարգանքի, որ դպրոցն աւարտելով հեռները տանեն, մաքրելով ապականւած մթնոլորտը: Ազատ օդի մէջ մեծցած ծառերն են, որ կարող են տոկալ ամէն փոթորիկների, մինչդեռ ջերմանոցի բոյսերը խամրում են ցրտի առաջին հպումից: Երկսեռ դրութեամբ միայն մենք կարող են ստեղծել սովորուն առաքինութիւն և փոխադարձ յարգանքի զգացում երկու սեռի միջեւ: Ասիական մտածման համար այս դրութիւնը շատ է անսովոր, բայց թէև մենք Ասիացի ենք, սակայն հայ ենք, ու թէև պաշտպան ենք զգաստութեան, բայց հարեմական դրութիւն չունենք: Կարծում եմ միասեռ կրթութիւն ստացած Ֆրանսացիին աւելի առաքինի չէ, քան երկսեռ դրութեամբ մեծացած

\*) Տես տախտակ բիւ 6:

Ամերիկացին, Երբ դպրոցը հոգեկան և բարոյական կեանքի աշխատանոց լինի՝ պատանիների արթնացող այրութիւնն ու հանացիութիւնը դէպի իդէալ կը միտեն։ Մոլութիւնները ծաղկում են անգործութեան, առանձնութեան և հոգեկան թմրութեան մէջ։ Վերջապէս չմոռանանք, որ աշակերտութիւնն ինքը՝ իր հասակի բերումով՝ լաւագոյն պաշտպան է իր անբոնութեան, եթէ դուրսի հասակաւորները թոյն չներարկեն նրանց հոգու մէջ...

Տեղն է հիմա, որ մի քանի խօսք ասենք ընտանիքի և վարժարանի փոխադարձ յարաբերութեան մասին։ Ծնողների մեծ մասն իրենց զաւակներին ուղարկում են դպրոց մասամբ՝ որ ուսում առնեն, բայց շատ աւելի՝ որ չմնան և չխանգարեն իրանց։ Նրանք կարծում են, որ երեխաների գլուխը մի տուփ է, որ դասատուներն ամէն օր, աստիճանաբար տեղաւորում են զանազան գիտելիքներ, ուստի մտածում են, որ իրենց գործը վերջանում է տղան դպրոց դնելով, որ կրթութիւնը ինքնագործութիւն է և դասատուն՝ դեկավար, որ ծնողները պէտք է հետեւեն երեխաների դաս պատրաստելուն, որ պէտք է նրանց ամէն հնար տան դաս սովորելու, — այս մասին շատ շատերը գաղափար իսկ չունին։ Ծնողը դպրոց է գալիս թոշակի խնդրով կամ երբ զաւակը որեւէ ծանր անկարգութեան պատճառով վտարման սպառնալիքի տակ է գտնուում։ Ինքնաբերաբար հետաքրքրել սեփական զաւակների կրթական վիճակով, անսովոր երեւոյթ է մեր ծնողների համար։ Սրա փոխարէն եղած են ծնողներ, որ թելադրած են իրենց զաւակներն այս կամ այն դասընկերի հետ չխօսել, որովհետեւ վարժարանից դուրս այդ աշակերտի ծնողների հետ ընտանեկան հաշիւներ ունեն։ Ընտանիքը ոչ միայն անտարբեր է դէպի կրթական գործը, այլ դառնում է նաև խոչընդոտ մեր կրթական ջանքերին։ Կան ծնողներ, որ չտեսի մեծամտութեամբ դրամը համարելով չափանիշ մարդկային արժանիքի՝ չեն քաշուում իրենց զաւակների ներկայութեամբ անպատկառ լեզուով խօսելու այն «վարժապետների» հասցէին, որոնց մօտ հետեւեալ օրն ուղարկում են իրենց զաւակներին կրթելու համար։ Այդ կարգի ծնողները սովորաբար վայրագ մարդիկ են լինում, և հօր ձեռքից ձեռք կերած երեխան վարժարանի մէջ է, որ «մարդ» է զգում իրան և յարգանքով ու սիրով կապուում հօր չհաւանած «վարժապետի» հետ, կան շատ ծնողներ, որ կարծում են

թէ տնօրէնը ոստիկան է, իսկ դասատուն՝ խարազանող։ Այս պայմանների մէջ, երբ ընտանիք ու դպրոց այսքան խորթ են իրար և այսքան տարբեր իդէալներ ունին, բարոյական կրթութեան հարցը ծանրակշիռ կերպարանք է ստանում։ Այս կարգի խնդիրների լուսարանութեան համար առաջիկայ տարին մտադիր ենք ծնողական ժողովներ գումարել և մի սերտ կապ հաստատել ընտանիքի և դպրոցի միջեւ։

Անցնող ուսումն. տարին փոխադարձ ծանօթութեան տարի եղաւ մեզ համար։ Մեր ուշադրութեան առարկան առաւելապէս մտաւորական կրթութիւնն եղաւ։ Յուսով ենք թէ առաջիկայ տարին պիտի կարենանք բարոյական կրթութեան հարցերի վրայ աւելի մեծ ուշադրութիւն դարձնել։ Մարդիկ խօսքով չէ որ դառնում են բարոյական։ Իսկ գործով բարոյակրթելու մեթոտները դեռ մշակւած չեն։ Սա մի նոր խնդիր է, որ փորձառաբար ու աստիճանաբար կարող է լուծուել։ Յամենայն դէպս կարող ենք ասել, որ մեր ձեռք առած թերի միջոցներով կարողացանք փոքր ինչ աշխոյժ և անձնավստահութիւն ներշնչել մեր երեխաներին, որ ընդհանրապէս վախկոտ էին, հետեւապէս ստող ու խորամանկ։ («Բարոյապէս արի»), այս է մեր իդէալը։

Այս ուսումն. տարւայ ընթացքին մենք ամէնից աւելի ուշադրութիւն դարձրինք աշակերտների մտաւորական կրթութեան վրայ, որ ըստ ոմանց բուն կրթութիւնն է։ Այս ուղղութեամբ որեւէ միջոցի դիմելուց առաջ՝ պէտք էր ուսումնասիրել աշակերտութեան զանգւածը։ Չենք կարող ասել, որ այս ուսումնասիրութիւնը կարգաւոր և բազմակողմանի եղաւ. բայց կարող ենք ասել թէ եղած ուսումնասիրութեան զուգահեռ՝ ձեռք առնւեցան համապատասխան միջոցներ։

Առաջինը աշակերտների հասակի խնդիրն էր։ Մեր համազգային աղէտների բերումով շատ երեխաներ հասակ էին առած տարագրութեան ճանապարհներին, առանց իրենց հասակին համապատասխան կրթութիւն ստանալ կարենալու։ Մենք ստիպւած եղանք մինչեւ Զատիկ նոր աշակերտներ ընդունելու, որով մեր աշակերտութիւնը կրթական տեսակէտով դառնում էր այլազան։

Դեռ նախորդ տարւանից տարրական դասարաններում տեղաւորւած էին աշակերտներ, որ իրենց հասակին նայելով՝ պէտք է լինէին վերին դասարաններում: Օգտուելով այն հանգամանքից, որ մեր վարժարանի առաջին չորս դասարանները երեքական դուզընթաց ունին, մենք որոշեցինք բոլոր հասակաւորներին և յետամնացներին համախմբել յատուկ դասարանների մէջ, որով ամէն կարգից ստացանք՝ հասակի տեսակէտով՝ երկու նորմալ և մի աննորմալ դասարան: Այս բարեփոխութիւնը, սակայն, անկարող եղանք մինչև վերին կարգերը տանելու՝ չէնք փնտրումարութեան պատճառով. դասարանները փոքր էին և տեղ չկար նոր նստարաններ դնելու: Տարրական Ա., Բ. և Գ. կարգերը, որ համեմատաբար մեծ սենեակների մէջ էին տեղաւորուած՝ հասակաւորների և յետամնացների յատուկ դասարան ունեցան: Տարրական Բ. դասարանի երրորդ զուգընթացի պահացոյցը յատուկ փոփոխութեան ենթարկեցինք, ուժ տալով հայերէնի և ուսողութեան դասերին, յուսալով թէ հնարաւոր է այդ կարգի աշակերտներին այնքան պատրաստել, որ կարենան թոռչք անել և միանգամից անցնել Միջին Ա. դասարանը, վաստակելով մի տարի և հասնելով իրենց հասակին համապատասխան կարգի: Իժմախտաբար այս փորձն արդիւնք չունեցաւ. երեսները շատ էին յետամնաց և տարագրութեան աւերիչ ազդեցութիւնը շատ էր զգալի:

Այնուհետեւ առաջին կիսամեակի յառաջդիմութիւնը և քըննութեանց արդիւնքը նկատի առնելով՝ Մարտի 11-ին մենք մի նոր դասակարգութեան ենթարկեցինք առաջին չորս կարգերի աշակերտութիւնը: Մենք նրանց բաժնեցինք բաւ ջանասիրութեան՝ ստեղծելով առաջին չորս կարգերի համար լաւ, միջակ և թոյլ դասարաններ: Այս դասակարգութիւնը փայլուն արդիւնք ունեցաւ. Երբ դասարանն այլազան է ջանասիրութեան և ընդունակութեան տեսակէտով, այն ժամանակ թոյլ աշակերտները խանդարում են լաւերին առաջ անցնելու. դասաւանդութիւնը դանդաղում է, դասատուն ստիպւած է լինում երկար աշխատելու թոյլերի վրայ, որ նրանց հասցնել կարողանայ գոնէ միջակներին. այդ ժամանակ լաւերը յորսնջում են՝ տասն անգամ լսելով նոյն նիւթն ու բացատրութիւնը, որ իրանք հասկացել ու իւրացրել են առաջին իսկ անգամին և դրանով աստիճանաբար

դառնում են անտարբեր դէպի դասն ու դասատուն: Չատելով լաւերին, միջակներին ու թոյլերին, մենք ստացանք միապաղաղ դասարաններ, մօտաւորապէս կարողութեան նոյն աստիճանով: Մինչդեռ այլազան դասարաններում թոյլ աշակերտը վհատում էր տեսնելով այն երկար տարածութիւնը, որ բաժնում էր իրան լաւ աշակերտից և այդպիսով կորցնում էր յառաջդիմելու ամէն յոյս ու հաճոյք. երբ դատման հետեւանքով նա նստեց իրան հաւասար աշակերտի մօտ, նրա մէջ արթնցաւ ինքնազստահութիւնը և սկսեց դանդաղ բայց յարատեւ աշխատել: Երեք տեսակ դասարանների մէջ ևս նոյն առարկան էր դասաւանդուում, բայց ոչ նոյն ծաւալով. լաւերն անցնում էին շատ աւելի, քան միջակներն ու մանաւանդ թոյլերը. ո՛չ ջանասէրն ստիպւած էր իր ընթացքը դանդաղեցնելու և ո՛չ թոյլը ապարդիւն ձիգեր անելու, որ հաւասարի լաւերին. ամէնքն ալ աշխատում էին իրենց կարողութեան համեմատ, առանց իրար խանգարելու:

Աշակերտների այս նոր դասակարգութիւնը նպաստաւոր եղաւ նաեւ դասատուների համար: Մինչդեռ հին կարգով նրանք ստիպւած էին բոլոր դասարաններում մեծ ձիգեր անել թոյլ աշակերտներին առաջ մղելու, նոր բաժանումներով նրանց լարւած ձիգի գործադրութեան վայրը նեղացաւ և ցրւած ձիգերն ամփոփւելով՝ զօրացան: Չարաչար աշխատելով թոյլերի դասարանում՝ դասատուները նւազ լարում ունէին միջակ դասարաններում, իսկ լաւերի մօտ դասաւանդութիւնը դարձաւ մի հաճոյք. սրանով դասաւանդական կորույն արդիւնաւոր սպառում ունեցաւ: Նկատելով այս դասակարգութեան դրական արդիւնքը և հիմնւելով տարւան վերջին քննութեանց և երկրորդ կիսամեակի յառաջդիմութեան վրայ՝ մենք յառաջիկայ տարւան համար նոյն հիմքերով դասակարգեցինք աշակերտութիւնը:

Մենք հետազօտութեան առարկայ դարձրինք նաեւ այն խընդիրը, թէ ո՛ր խաւերին են պատկանում մեր աշակերտները \*): Համախմբելով 445 ծնողների վերաբերեալ տեղեկութիւնները, մենք եկանք այն եզրակացութեան, որ նրանցից

42	հօգի,	այսինքն	9,5	առհարիր պաշտօնեաներ են,
234	»	»	52,5	» արհեստաւորներ են,

\* ) Տե՛ս տախտակ քիւ 7.

128	»	»	29,0	» մանրու խոչորվածառականներ.
27	»	»	5,8	» գործաւորներ են .
14	»	»	3,2	» պատահական զբաղում ունին :
445			100	»

Պաշտօնեաների մէջ են առնւած հանրային, պետական եւ մասնաւոր հաստատութեանց մէջ ծառայողները . մանր ու խոչոր «վաճառական» անւան տակ համախմբուած են նաեւ մանր խանութպանները, որ այդ բաժնի մեծագոյն թիւն են կազմում : Եթէ նկատենք, որ պատահական զբաղում ունեցողները դասակից են պարզ գործաւորների, իսկ պաշտօնեաները իրենց նիւթական կացութեամբ գործաւոր դասին կը պատկանեն . եթէ նկատենք, որ «վաճառական» բաժնի 2/3-ը փոքր խանութպաններ են, այն ժամանակ պիտի տեսնենք, որ մեր աշակերտութեան աւելի քան 80 առարիւրը խոնարհ խաւերից է դուրս գալիս : Այս հանգամանքը նախորոշում է դպրոցի ընդթը, նպատակն ու ծրագիրը :

Մեր վարժարանը գերազանցապէս ժողովրդական դպրոց է . իր նպատակը պէտք է լինի կիրթ ժողովուրդ պատրաստել, ընդունակ իր օրապահիկը շահելու և կեանքի մէջ իր համեստ տեղն ապահովելու : Վարժարանի ծրագիրը և դասաւանդութեան մեթոդները պէտք է յարմարին այս նպատակին : Քիչ թէ շատ ունեւոր դասն իր զաւակներին ուղարկում է օտար վարժարան . ազգային-ժողովրդական դպրոցն անկարող է այդ չարիքի առաջն առնել : Բարեկեցիկ խաւն ուրիշ իղէալներ ունի քան աշխատաւոր զանգւածը . սա շատ բնական է և ուրիշ կերպ լինել չէր կարող : Անիմաստ բան կը լինէր խոնարհ խաւերի կրթութեան յատկացւած մի վարժարանի մէջ ծրագիր ու մեթոդ յարմարցնել մի բուն ապազգայնացող ունեւորների պահանջին և ըմբռնումներին : Աշխատաւոր զանգւածը, — արհեստաւոր, գործաւոր և պաշտօնեայ, — պէտք է որոշապէս գիտակցեն այս հանգամանքը եւ ունենալով իրենց վարժարանը՝ սրտանց կապեն նրան և նրա համար աշխատեն : Կրթութեան գործն, այսպիսով, պէտք է առնել բարեգործութեան ոլորտից և զնել գործակցութեան հիմքի վրայ : Այն բարեկեցիկը, որ զաւակ չունի դպրոցում, մասի ծայրով միայն կարող է շարժել կրթական գործի ծանր բեռը :

եթէ երբեք մտածի շարժել : Միմիայն աշխատաւոր զանգւածն է, որի համար մեր վարժարանը կենսական անհրաժեշտութիւն է, և իր միասնական գործակցութեամբ նա կարող է պահել և բարգաւաճել :

Անցեալ ամառ քաղաքական ժողովը պաշտօնի անցնելուն պէս կազմում է մի կրթական յանձնախումբ, յանձնարարելով նրան ուրւագծել մեր վարժարանի համար մի նոր կանոնագիր և ծրագիր : Իր զեկուցման մէջ այդ Յանձնախումբը պարզում է մի քանի տեսակէտներ կրթական ծրագրի մասին, որ թւում է թէ ներշնչւած են մեր վերը բերած նկատումներից : Նրանց առաջարկած ծրագրային փոփոխութիւններից մէկն այն է, որ վարժարանի մէջ մանչերին Արաբերէն աւանդելի՝ նկատելով այդ լեզւի գործնական արժէքը : Կրթական ծրագրի այդ թելադրանքը այս տարի գործադրեց վարժարանի մէջ, ուր սկսած Տարբ. Գ. բաժանումից՝ մանչերին շաբաթական երեք պահ աւանդում էր Արաբերէն : Այնուհետեւ կրթական ծրագիրը թելադրում է եւրոպական երկու լեզուներից զօրացնել Ֆրանսերէնը, մասնաշնչելով նրա գործնական կարեւորութիւնը : Ընդառաջ զնալով ծնողների պահանջին, որ կամեցան Ֆրանսերէնին զուգընթաց աւանդել նաև Անգլիերէնը, այդ թելադրանքն այս տարի լրիւ գործադրութիւն չունեցաւ : Անգլիերէնը մնաց վերին կարգի դասարանների մէջ շաբաթական երեք պահով՝ սկսած Միջին Բ. -ից : Ֆրանսերէնն սկսում էր մի տարի առաջ և շաբաթական չորս պահով աւանդում էր մինչեւ վեր : Այսպիսով կրթական Յանձնախումբի թելադրանքը մասամբ միայն իրականացաւ : Տնօրէնութեան տեսակէտն այն էր, որ երկու լեզուն ևս պիտի սկսին նոյն տարին և աւանդւեն նոյնքան ժամերով, պայմանով որ նրանցից մէկը լինի պարտադիր՝ ընտրութիւնը թողնելով աշակերտին :

Դասարաշխման այս ձեւը սակայն մեծ ծախս կը պահանջէր, քանի որ մեր առաջարկով օտար լեզուներին պէտք էր յատկացնել շաբաթական առնւազն վեց պահ՝ չօշափելի արդիւնք ստանալու համար : Առաջիկայ տարւան համար մենք նախընտրեցինք մի նոր դրութիւն, որով կրթական Յանձնախումբի թելադրանքն աւելի լաւ գործադրւած կը լինի, քան եղաւ այս տարի : Այդ դրութեամբ Ֆրանսերէնը մեր վարժարանի մէջ համար-

ուում է պարտադիր լեզու բոլոր աշակերտների համար, իսկ Անգլիերէնի ուսումը դառնում է կամաւոր: Երկուսն էլ սկսւում են Միջին Ա. դասարանից: Ֆրանսերէնն առաջին տարին պէտք է աւանդել շաբաթական հինգ պահ, իսկ հետեւեալ տարիներն՝ վեց պահ: Անգլիերէն սովորողները բաժանւելու են երկու խմբի. բնաւ չիմացողներ և արդէն ուսածներ. այս երկու խումբին ևս Անգլիերէնն աւանդւելու է շաբաթական վեց պահ: Եթէ ցանկացողների թիւը մեծ լինի՝ պահերի թիւը կը պակսի, փոխանակ վեցի՝ շաբաթը կ'աւանդել հինգ, չորս կամ երեք պահ: Յամենայն դէպս վարժարանին մէջ Անգլիերէնին յատկացւած պահերը աւելիչ են լինի քան շաբաթը տասներկու պահ: Այս կարգադրութեան նպատակն է զօրացնել Ֆրանսերէնի ուսումը այն աստիճան, որ աշակերտները չըջանաւարտ լինելով՝ տիրացած լինեն այդ լեզւին: Յայտնի է, որ մեր վարժարաններն աւարտածները ո՛չ Ֆրանսերէն գիտեն բաւարար չափով, ո՛չ Անգլիերէն: Եթէ դրա պատճառներից մէկն այն է, որ մեր վարժարանները նախակրթարաններ են, հետեւապէս աշակերտները կարճ ժամանակ միայն սովորում են օտար լեզու (3—4 տարի), միւս պատճառն այն է, որ այդ երկու լեզուներին բաւականաչափ պահ չի յատկացւած: Միւս կողմից երեխաներն անկարող են երեք օտար լեզու միանգամից սովորել. նրանց ուշադրութիւնը ցրւում է: Մեր ընդունած նոր դրութեամբ պարտադիր լեզուները դառնում են երկու, — Արաբերէն և Ֆրանսերէն. հետեւապէս աշակերտի աշխատանքը դիւրանում է: Ֆրանսերէնին յատկացւում է շատ աւելի ժամ, քան եղած է սովորաբար: Մենք կարծում ենք, որ այս ձեւով կարելի է շատ աւելի լաւ հետեւանքի հասնել:

Կրթական Յանձնախումբը առաջարկած էր դպրոցը կազմակերպել համակենտրոն շրջանների դրութեամբ, ամէն շրջանին յատկացնելով երեքական տարի: Ընդունելով հանդերձ համակենտրոն դրութեան սկզբունքը, մենք առաջարկեցինք առաջիկայ տարւանից ամէն շրջան համարել երկու տարի, ինչպէս ընդունւած է այդ դրութեան հայրենիքում—Ֆրանսիայում: Այս փոփոխութիւնը կրթական տեսակէտով մեծ նշանակութիւն ունի մասնաւանդ ոչ-հայկական առարկաների ծրագիրների, աւանդելիք նիւթի ծաւալի և դասադրքերի տեսակէտով:

Կրթական Յանձնախումբի թելադրանքով և Քաղաքական Ժո-

ղովի որոշմամբ այս տարի մեր դպրոցն ունեցաւ եօթերորդ դասարան. առաջիկայ տարին բացւելու է ութերորդը և հաւանօրէն կ'ունենանք նաև իններորդ դասարան: Վարժարանի այս ընդարձակումն անհրաժեշտ է թէ՛ մեր գաղութի և թէ՛ համազգային շահերի տեսակէտով: Մեր գաղութն արդէն բազմանգամ է և նա կարող է աշակերտ մատակարարել վերին դասարաններին: Թողնել որ պատանիները օտար վարժարանի մէջ ստանան իրենց երկրորդական կրթութիւնը՝ կը նշանակէ նպաստել նրանց և գաղութի ապագա քայնաքման: Գոհանալ նախնական կրթութեամբ՝ նշանակում է հայրութեան համար հայ մտաւորական չպատրաստել: Նախակրթարանը կարող է միմիայն տարրական կրթութիւն տալ. մայրենի լեզւի թերի գիտութեամբ և ուսողութեան չորս գործողութեամբ մենք չենք կարող մտաւորական խաւ պատրաստել գաղութի համար: Իսկ մտաւորական խաւն է աղգայնութեան կրողն ու պահապանը: Անկարելի է 13—14 տարեկան պատանիներին գիտակցական տէրն ու վարիչը դարձնել աղգային մշակոյթի: Իր ինքնագիտակցութեան լաւագոյն տարիները այս գաղութի հայ աշակերտն ապրում է օտար վարժարանի մթնոլորտում, որ նրան պատւաստում է օտար կրթութեան հետ և օտար ոգի: Անպատւաբեր և քայքայիչ է մի գաղութի համար, որ բռնադատւած չէ օտար կրթութիւն ստանալու, այդքան անտարբեր մնալ համազգային արժէքների հանդէպ: Գահիրէ և Աղեքսանդրիա միասնաբար կարող էին առնել այս գահավէժ ընթացքի առաջքը, եթէ բաւական ազգային գիտակցութիւն ունենային: Ինչ գնով և լինի պէտք է հայ պատանին իր երկրորդական կրթութիւնը մայրենի լեզուով ստանայ: Ոչ մի նիւթական զոհաբերութիւն մեծ չէ այս նպատակի համեմատութեամբ: Մինչև մեր գաղութի երկու կենտրոնները համաձայնութեան դան այս կենսական խնդրի հանդէպ՝ մեզ կը մնայ մեր համեստ նիւթականով զոհացում տալ այս կարեւոր պահանջին: Կարծում ենք որ Ազգային Իշխանութիւնը պէտք է ձեռք առնէ այս հարցի պաշտօնական արծարծումը և յամառօրէն հետապնդի նրա լուծման: Օտար լեզուների ուժեղացումով կարելի է հակակշռել այն միակ առաւելութիւնը, որ ունին օտար վարժարանները: Եւրոպական բարձր դպրոցներն ընդունւելու համար ստիպողական հարկ չկայ, որ մեր աշակերտ-

ները երկրորդական կրթութիւնն օտար վարժարանի մէջ ստանան։ Մեր երկրորդական վարժարանի ծրագիրը բաւական կը լինի բարձր դպրոցների դռները բանալու մեր աշակերտութեան առջեւ։ Ռուսաստանի հայոց թեմական դպրոցները շատ աւելի պակաս ծրագիր ունէին, բայց նրանց շրջանաւարտները ազատօրէն մտնում էին եւրոպական համալսարանները։ Այս գործի համար բաւական մեծ ծախս կը պահանջէր, բայց Դահիւրէն և Աղեքսանդրիան միասնաբար կարող են հոգալ այդ ծախսը։

Մենք աշխատեցինք հնարաւորութեան սահմանում բարեփոխել դասատուների աշխատանքի պայմանները, աւելի արդիւնք ստանալու նպատակով։ Արտասահմանի հայ վարժարաններում երեսաները դպրոցական չէնք ունենում մնում են առնւազն եօթ ժամ։ Երբ դաս չունին նրանք նստում են դասարանում դաստիարակի կամ դասատուներից մէկի հսկողութեամբ և դա կոչւում է «սերտողութիւն»։ Կարծում ենք, որ այս կարգը շատ օգտակար է ծնողների հանգստութեան համար, որ երկար ժամանակ ազատ են մնում երեսաներին հսկելու հոգից, բայց շատ կասկածում ենք, որ օգտակար լինէր աշակերտների և կրթական գործի համար։ Սերտողութիւնն այն ձեւով, որ լինում է մեր վարժարաններում, իսկապէս մի ապարդիւն ժամանց է, որ վարժեցնում է աշակերտներին անկարգութեան և անգործութեան, իսկ դասատուներին ապարդիւն յոգնութիւն ու ձանձրոյթ է բերում։ Դա ո՛չ աշխատանք է, ո՛չ հանգիստ։ Դասատուն տեսարակ է ուղղում կամ գիրք է կարդում, երբեմն ազդարարելով աշակերտներին, որ հանգիստ մնան, իսկ երեսանները ցած ձայնով խօսում են իրար հետ կամ դասին չվերաբերող գործով զբաղւում, ժամերն այսպէսով վատնւում են ապարդիւն։ Տարրական կարգերը դաս չունեն, որ սերտեն, իրենց դասերն արդէն պատրաստում են դասաւանդութեան ընթացքին։ Մանկավարժական տեսակէտով սա միակ բանաւոր ուղին է, հետեւապէս սերտողութիւն այստեղ լինել չէր կարող։ Ո՛չ թէ երեսան, հասակաւորն անգամ կարող չէ զիմանալ եօթ ժամաւ անընդհատ մտաւոր աշխատանքի, ուստի բնական է, որ միջին կարգերն եւս թէեւ պատրաստելու դասեր ունեն, բայց ուժասպառ լինելով՝ մղում ու սիրտ չունեն նրանցով զբաղւելու։ Ստիպւումը այս զէպղում միմիայն նրանց ուժաթափ կարող է անել և մեռցնել ամէն հաճոյք մի

բան սովորելու։ Դալով դասատուին՝ նա ևս իր ժամանակն ապարդիւն վատնելով՝ հնար չի ունենում իր դասերը պէտք եղած չափով մշակելու և պատրաստելու։ Անուանապէս նրանք 24—26 պահ դաս ունին միայն, իրօք նրանք վատնում են 38—39 պահ ժամանակ։ Այս հանգամանքը նկատի առնելով՝ մենք աշխատեցինք տարրական կարգերի դասերն իջեցնել 6-ի և դասատուների մնացորդ մի ժամն օգտագործել դասախօսութեանց համար։ Այնուհետեւ Դեկտ. 1-ից հրաւիրեցինք մի վերակացու, որով միւս դասատուների հսկողութեան պահերը փոքր ինչ պակսեցան։ Դասատուն ոգին է դպրոցի, եթէ նա շարունակ տայ, առանց ստանալու՝ շուտով կը սպառուի։ Դասաւանդութիւնն այն գործերից է, որ պէտք է աշխոյժ և կենդանի տարւի՝ արդիւնք տալու համար։ Դասատուն պէտք է հնար ու ժամանակ ունենայ իր արւեստի զարգացման և նորոյթների հետեւելու, այլապէս նա կը դառնայ մի տաղտկալի, հետեւապէս ապարդիւն աշխատաւոր։

Մեր վարժարանը այս տարի ունէր 29 դասատու, սրանցից 14-ը այր և 15-ը կին։ Մանկավարժէզի մէջ աշխատում էին 7 վարժուհի։ Մնացած 22 հոգին դասաւանդում էին նախակրթարանի մէջ։ Նրանց անուսումնականները, կրթութեան աստիճանը, աւանդած դասերն ու նրանց քանակը և վարած յատուկ պաշտօնները կարելի է տեսնել զեկուցմանս կցած թիւ 8 տախտակի վրայ։ Նայելով այն կրթութեան, որ ստացել են մեր դասատուները, մենք կը տեսնենք, որ մէկի բացառութեամբ՝ մնացածները մասնագիտական պատրաստութիւն չունեն։ Այս հանգամանքը յատկորոշ չէ միայն մեր վարժարանի համար, հայոց ազգի բովանդակ կրթութիւնը առաջ է տարւել և այսօր էլ տարւում է ոչ մասնագէտ անձերի ձեռքով, և եթէ այդ ասպարէզի մէջ մենք չատ յաճախ հասած ենք փայլուն արդիւնքի, պատճառն այն է, որ ունեցած ենք կոչումով մանկավարժներ, որ ինքնաշխատութեամբ հետեւած են իրենց արւեստի զբաղանդութեան։ Այս տեսակ անձեր, որ կոչումն ու փորձառութիւնն ունին կրթական գործի՝ անպակաս չեն մեր վարժարանի դասատուների մէջ։ Սակայն անկարելի է ժխտել մանկավարժական տեսական պատրաստութեան դերը կրթական գործի մէջ։ Այս նկատումով մենք մտածեցինք ամէնից առաջ մի կենդանի հետաքրքրութիւն առաջ բերել մեր դասատուների մէջ զէպի կրթա-

կան գործը, նրա խնդիրները և սրանց լուծման եղանակները մանկավարժական գրականութեան և օտար երկրների մէջ: Այս նպատակով մենք բերել տուինք 280 մանկական, մանկավարժական և դասաւանդական գրքեր Յրանսերէն լեզուով և նրանց ընթերցումն ու օգտագործումն ապահովելու համար՝ հաստատեցինք շաբաթական հաւաքոյթներ: Ամէն երկուշաբթի օր, Ապրիլի 7-ից սկսած, դասատուներից որեւէ մէկը զեկուցում էր իրան յանձնարարած գրքերի մասին, որով ունկնդիրները նոյնպէս ծանօթանում էին այդ գրքերի բովանդակութեան, դադափարներին և մեթոդին, Որնչե տարւայ վերջը այս կարգի 9-ը հաւաքոյթ ունեցանք: Չեկուցողների անունները և նրանց գեկուցումները նիւթերը կարելի է տեսնել թիւ 9 տախտակի վրայ: Այս հաւաքոյթները բարոյական և կարծում ենք կրթական հետեւանքներ ունեցան. նրանք ստացան մանկավարժական ակումբի ընդթ, ուր քննութեան էին աւելում դասաւանդութեան վերաբերեալ սկզբունքային, ծրարային և մեթոդական խնդիրներ. մտքերի չփոմով մշակում էր մանկավարժական միաշխարհոհայեացք և յաճախակի հանդիպումներով դասատուները կազմում էին մի բարոյական ընտանիք, որ հետամուտ է մի հանրային ընդհանուր նպատակի: Այս հաւաքոյթներից դուրս՝ ցանկանալով դասատուներին հետաքրքրել մանկավարժական խնդիրներով՝ մենք Յունուարի վերջերից շաբաթն երկու անգամ— երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը— տարրական կարգերի դասատուներին և Մանկապարտէզի կրտսեր վարժուհիներին դասախօսեցինք մեր կրթական գործի համազգային պայմանների մասին և խմբական ընթերցումով բացատրեցինք մայրենի լեզուի դասաւանդութեան մեթոդի և մանուկների մարմնի և հոգուն վերաբերեալ երկու գիրք, իբր ներածութիւն այն մանկավարժական դասընթացի, որ յառաջիկայ տարին մտադիր ենք հաստատել գլխոցում մեր դասատուների համար: Այս կարգի քսան և հինգ դասախօսութիւն ունեցանք: Մենք մտադիր ենք այսպիսով աստիճանաբար լրացնել մասնագիտական պատրաստութեան այն թերին, որ հանգամանքների բերումով ունեցած են և ունին հայ վարժարանների դասատուներն առհասարակ:

Դասաւանդութեան եղանակները բարելաւելու դիտումով մենք հետեւեցինք դասարանների դասաւանդութեան ներկայ

լինելով նրանց դասերին և մեր դիտողութիւններն արինք անհատաբար կամ իբր ընդհանուր նկատողութիւն՝ մանկավարժական ժողովներում: Նախակրթարանի մէջ տարւայ ընթացքին մենք լսած ենք 109 դաս և երբեմն այցելած ենք Մանկապարտէզ: Գլխաւորապէս լսած ենք Հայերէնի (34) և ուսողութեան (20) դասեր, նկատելով որ սրանք են մեր վարժարանի հիմնական առարկաները. այնուհետեւ լսած ենք տասնական դաս գիտութեան, Յրանսերէնի, Արաբերէնի: Մենք շատ աւելի յաճախ կարող էինք դաս լսել, եթէ երբեմն ստիպւած չլինէինք հսկողի պաշտօն կատարելու կամ պարապելու բացակայ դասատուների փոխարէն: Տարւայ ընթացքին մենք պարապել ենք 24 դաս, որոնցից 13 Հայերէն, 7 ուսողութիւն և մնացածն ալ առարկաներից:

Դասարանների կրթական մակարդակը յայտնաբերելու դիտումով մենք այս տարի որոշեցինք «չըջիկ տետրակներ» ունենալ, ուր աշակերտները հերթով գրում էին իրենց գրաւոր պարտականութիւնները լեզուներից, ուսողութիւնից և գիտութիւնից: Այս տետրակները տարւայ վերջի հանդէսին ցուցադրւած էին աշակերտական ուրիշ աշխատանքների հետ միասին:

Տարրական առաջին երկու կարգերի յետամնաց աշակերտներին առաջ վարելու համար մենք պարտադրեցինք վարժարանիս հսկողին յատկապէս պարապելու նրանց հետ: Այս միջոցը սպասած արդիւնքն ունեցաւ. տարրական կարգերի դասարան փոխողների տոկոսը հասցնելով 90-ի: Առաջիկայ տարին մտադիր ենք սերտողութեան անիմաստ պահերը օգտագործել յետամնաց աշակերտների պատրաստութեան համար:

Մենք այս տարի պահպանեցինք աշակերտների յառաջդիմութեան ստուգման աւանդական ձևը— քննութիւնները, որ եղան երկու անգամ՝ տարւայ կէսին և վերջին: Առաջին կիսամեակի քննութիւնները աւելի ստուգման ընդթ ունէին և միմիայն դրաւոր եղան, իսկ տարւայ վերջի քննութիւնները կատարւեցին հրապարակով և թէ՛ դրաւոր, թէ՛ բերանացի: Աշակերտական յառաջդիմութեան թւական պատկերացումներից կարելի է տեսնել, թէ քննութիւնները որոշ նշանակութիւն են ունեցած՝ աշակերտներին աշխատանքի մղելու տեսակէտից \*): Ամէն մի

\*) Տես տախտակներ թիւ, 10, 11, 12, 13, 14, 15, 16:

դասարանի և ամէն առարկայի գրաւոր աշխատանքները, լաւագոյնը և վատթարագոյնը զատուած և պահուած են առանձին՝ յետագային իբր համեմատութեան եզր ծառայելու համար: Նկատելով, որ ազատ դասարաններ չունինք քննական աշխատանքները կատարելու համար, մենք Տարրական Ա. և Բ. կարգերի քննութիւնները կատարեցինք դասերի ընթացքին և նրանց պարպմունքները դադարեցրինք Յունիսի 23-ին: Միաժամանակ ցանկանալով վերին կարգերի քննութիւններին շատ օր չյատկացնել, մենք մի քանի առարկաների քննութիւնը կատարեցինք միմիայն գրաւոր, իսկ Արաբերէնի և Անգլիերէնի գրաւոր և բերանացի քննութիւնը՝ դասերի ընթացքին: Այսպէս Միջին Գ. դասարանը աշխարհագրութեան քննութիւնը աւելցրաւ: Նոյն ձեւով քննութիւն աւելցրաւ Ա. դասարանը հանրահաշիւի և առանին տնտեսութիւնի: Պրանսերէնի գրաւոր քննութիւնը բոլոր դասարաններում կատարեց դասերի ընթացքին:

Մեր վարժարանի յառաջդիմութիւնը հետեւեալ պատկերն ունի: Տարւան վերջը նախակրթարանի մէջ կային 522 աշակերտ. սրանցից 244 աղջիկ և 278 մանչ: Աղջիկներից կարգը փոխած են 197 հոգի, որ ասել է իրենց թւի 80,7 առհարիւր. մանչերից հետեւեալ դասարան փոխադրուած են 192 հոգի, այսինքն իրենց թւի 69 առհարիւր. այսպիսով աղջիկներն աւելի աշխատասէր են քան մանչերը. Նոյն համեմատութիւնը մենք տեսնում ենք նաև դասարանի մէջ մնացողների վրայ: Աղջիկներից 15 հոգի, այսինքն իրենց թւի 6,2 առհարիւր մնացել են դասարաններում, իսկ մանչերից մնացել են 44 հոգի, որ իրենց թւի 15,5 առհարիւրն է: Վերաքննելիները նոյն համեմատութիւնն ունին. աղջիկները 32 հոգի. այսինքն 13,1 առհարիւր, մանչերը 42 հոգի— 15 առհարիւր: Ընդհանուր հաշուով նախակրթարանի մէջ իրենց կարգը փոխած են 389 հոգի, որ կաղմում է աշակերտութեան 74,5 առհարիւր. մնում են 59 հոգի, այսինքն 11,3 առհարիւր և վերաքննելի են 74 հոգի, ասել է 14,2 առհարիւր: Եթէ ենթադրենք, որ վերաքննելիների կէսը յաջողեն, այն ժամանակ աշակերտութեան 81,6 առհարիւր փոխադրուած կը լինի յաջորդ դասարան: Այս յառաջդիմութիւնն անսպասելի էր մեզ համար և կարելի է շատ բաւարար համարել, նկատելով որ փոխադրողների 70 առհարիւրը բաւարար արդիւնք է համարուած դպրոցական աշխարհում: Յառաջդիմութիւնը նոյն համեմատութիւնն ունի Մանկապարտէզի մէջ. երկու «ծաղիկ» դասարանների 60 փոքրիկներից այս

տարի շրջանաւարտ են եղած 50 հոգի, ասել է՝ 83 առհարիւր: Փոխադրական այս տոկոսները դեռ բաւական չեն պայծառ գաղափար տալու վարժարանի աշակերտութեան որակի մասին: Այդ պատկերը որոշապէս գծելու համար մենք այստեղ վերլուծութեան կ'ենթարկենք մեր տախտակներից մէկի (թիւ 18) ամփոփումը \*), ուր նշանակուած են թէ որոշ քանակութեամբ նիշեր քանի՞ աշակերտ շահած են: Այդ տախտակի մէջ հաշի առնրւած են 11 առարկայ— Հայերէն, Պրանսերէն, Արաբերէն (իսկ աղջիկների համար ձեռագործ), Անգլիերէն, Ուսողութիւն. Գիտութիւն, Կրօն, Ազգ. Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Գծագրութիւն, Մարզանք, Տախտակը նկատի ունի վերին եօթ կարգերի աշակերտներին—Միջին Ա. դասարանի երեք զուգընթացները. Միջին Բ. դասարանի երկու զուգընթացները, Միջին Գ. և բարձր Ա.: Այս կարգերի մէջ աշակերտների թիւը տարւայ սկզբին եղած է 166, տարւայ ընթացքին աւելցած են չորս հոգի, տարւայ վերջին քննութեան չեն եկած եօթ հոգի: Յիշեալ 11 առարկաներից գերազանց թիւ շահող աշակերտը պէտք է ստանար 110: Մենք տեսնում ենք, որ այդ թիւը շահող ոչ մի աշակերտ չունինք: Ամենաբարձր թիւը, որ շահած են լաւագոյնները՝ 100—104 է: Մենք տեսնում ենք նաև, որ ամէնից թոյլ աշակերտները շահած են պահանջուած թւի կէսից աւելին, փոխանակ 55-ի՝ 60—70: Սրանից պարզ երեւում է, որ մեր աշակերտութիւնը յետամնաց չէ: Նայելով թոյլ աշակերտների ընթացքին, մենք տեսնում ենք, որ տարւայ սկզբին նրանց թիւն եղած է 10, տարւայ կէսին այդ թիւն աւելանում է 4-ով. բայց տարւայ վերջին յանկարծ իջնում է 5-ի: Նշանակում է նրանց կէսը յառաջդիմելու մի ճիգ է արած: Աշակերտների հետեւեալ շարքը 70—80 շահողներն են, որ տարւայ սկզբին լինելով 64, երկրորդ կիսամեակից սկսել են արագութեամբ նւազել՝ հասնելով սկզբնական թւի կէսից պակասին— 31 հոգի. այսպիսով աշակերտութեան յառաջդիմութիւնն անկասկածելի է: Առաջին և երկրորդ շարքի աշակերտները տարւայ վերջին 36 հոգի են. յառաջդիմութեան ընդհանուր տախտակից կարող ենք տեսնել, որ այդ կարգերի մնացող աշակերտների թիւն է 11, իսկ վերաքննելիների թիւը 37, զուամար 48: Սրանից կարելի է գաղափար կազմել կարգ փոխողների որակի մասին. անկասկած այս 48 հոգու մէջ են վերը

\*) Տես տախտակ թիւ 19.

բերած 36 թոյլ աշակերտները . նշանակում է ամէն առարկայից միջին հաշուով 6,5 կամ 7 շահողներն անգամ կ'ամ վերաքննելի են կամ մնացել են իրենց դասարաններում . Ուշադրութեան առնելով 36 և 48 թւերի տարբերութիւնը՝ կարելի է ասել, որ կան 12 աշակերտ, որոնք ընդհանուր առմամբ 80-ից աւելի շահելով կարգերը չեն փոխած : Այսպիսով աշակերտների գնահատութիւնը մեր վարժարանի մէջ եղած է բաւական խիստ, հետեւապէս կարգը փոխողների որակը բաւական բարձր է : 80—90 թիւ շահող աշակերտների թիւը համարեա մնում է անփոփոխ . նրանք աշակերտութեան ընդհանուր թւի մօտ կէսն են կազմում , լինելով 75 հոգի 163-ի հանդէպ : Մեր գնահատութեամբ սրանք միջակ աշակերտներ են : Չորրորդ կարգը կազմում են լաւ աշակերտները, որ շահած են 90—100 թիւ . սրանք տարւայ սկզբին 17 հոգի լինելով՝ տարւայ վերջին դարձած են 37 . նրանց թւի մեծանալը կատարւած է առանց տատանումների և թռիչքների : Տարւայ սկզբին մենք ունեցած ենք միմիայն մէկ լաւագոյն աշակերտ, որ շահած է 100—104 թիւ . տարւայ վերջին լաւագոյն աշակերտների թիւը դառնում է 15 : Վերջին երկու շարքերի վրայ կարելի է տեսնել վարժարանի անսայթաք յառաջդիմութիւնը : Լաւ և լաւագոյն աշակերտների թիւը տարւայ սկզբին եղած է 18, իսկ տարւայ վերջին 52, այսինքն երեք անգամ աւելի : Այս թիւերը կասկած չեն թողնում վարժարանի մէջ կատարւած արդիւնաւոր աշխատանքի մասին : Լաւ ու լաւագոյն աշակերտները, որ 52 հոգի են, այդ կարգերի աշակերտութեան 32 առհարիւրն են կազմում և միջին հաշուով ամէն առարկայից շահած են 8—9,5, որ նշանակում է թէ մեր վարժարանի մէջ մտաւորական կրթութեան տեսակէտով բաւական զօրեղ աշակերտութիւն կայ : Այս արդիւնքը մենք համարում ենք շատ բաւարար, բայց ո՛չ փայլուն : Մենք համոզւած ենք, որ կարելի է շատ աւելի մեծ արդիւնքի հասնել . դրա համար եթէ մի կողմից պէտք է, որ դասատուներն աւելի եռանդով աշխատին, ոչ պակաս անհրաժեշտ է, որ ծնող և հասարակութիւն կենդանի հետաքրքրութիւն ունենան գէպի աշակերտն ու նրա աշխատանքը :

Ցանկանալով որոշապէս ցուցադրել մեր վարժարանի կրթական վիճակը, մենք հրահանգեցինք դաստիարակներին որոշ կարգով համախմբելու իրենց դասարանի աշակերտութեան շահած նիշերը . այնուհետեւ անհրաժեշտ ցուցումներ անելով Պ. Զ. Պալեանին՝ խնդրեցինք պատրաստել թւական և գծական գատ-դատ

տախտակներ և համադրական ցուցակներ վերին եօթ դասարանների համար \*) : Գծապատկերներից միայն մէկն ենք կցում մեր զեկուցման, նկատելով որ նրանց տպագրութիւնը մեծ ծախս է պահանջում : Ամէն դասարանի յատկացւած զատ տախտակի վրայ կարելի է տեսնել թէ դասաւանդւած գլխաւոր առարկաներից այդ դասարանը ո՞րքան նիշ է շահած Հոկտ. - Նոյեմբեր, Դեկտեմբեր, Յունւար - Փետրւար, Մարտ, Ապրիլ - Մայիս և Յունիս ամիսներին : Իբր տարր թւական գումարների առնւած են աշակերտների ամսական միջինները և քննական նիշերը, որ նկատւած են իբր ամսական միջին նիշ : Ամիսներից մի քանիսը զոյգ են . դրա պատճառն այն է, որ Հոկտեմբերը, իբր տարւայ սկիզբ, չի կարելի լրիւ ամիս նկատել . տարւան սկզբի աշխատանքները կլանում են այդ ամսւան կէսը և բաւական ժամանակ չի մնում դասարանի բոլոր աշակերտներին հարցնելու եւ գնահատելու : Միւս երկու զոյգերը ստեղծւած են նոյնանման նկատումներով, քանի որ Մոռնդի և Չատկի արձակուրդները կիսում են Յունւար և Ապրիլ ամիսները : Այդ տախտակների վրայ զետեղւած նիշերի քանակով կարելի է որոշել 1) թէ տարւան ընթացքին որ եւ է առարկայ ի՞նչ յաջողութեամբ է ուսումնասիրւած դասարանի մէջ . 2) թէ որ եւ է առարկայ այդ տեսակէտից ի՞նչ տեղ է զբաւում միւս առարկաների շարքում . 3) թէ աշակերտութիւնը ո՞ր ամսին է ամէնից աւելի աշխատած և վերջապէս 4) թէ դասարանը բոլոր առարկաներից ամբողջ տարւայ ընթացքին ո՞րքան նիշ է շահած :

Այս տախտակները ենթադրում են թէ բոլոր դասատուները գնահատութեան նոյն չափն ունին աշակերտների աշխատանքի համար, ինչ որ զժուար է ասել : Մեր դասատուներն ազատ են եղած իրենց ձեռով գնահատութիւն անելու և զժւար է այսպիսի մի աշխատանք որոշ կանոններով սահմանաւորել լիովին : Գնահատութեան չափերն, այսպիսով, վերստուգելի չեն և անկարելի է տարբեր դասատուների միեւնոյն նիշերին առարկայօրէն նոյն արժէքը տալ : Բայց այս հանգամանքը անարժէք չի դարձնում մեր պատրաստած տախտակները, նկատելով, որ թէև ամէն դասատու կարող է ունենալ գնահատութեան իր չափը, բայց այդ չափը նոյնն է բոլոր դասարաններում, հետեւապէս նրա դրած նիշերը, իբր տարբեր դասարանի թւապատկերի՝ ամէն

\*) Տես տախտակ թիւ 10—16, ու. նաեւ 20 և 21 .

տեղ նոյն արժէքն ունին: Թւական պատկերի ցուցական արժէքը դրանից չի տուժում:

Թիւ 21 տախտակը, որ թւական համապատկերն է զատ տախտակների և որի վերլուծութեամբ միայն պիտի գոհանանք այստեղ, մեզ տալիս է վերին եօթ դասարանների յառաջդիմութեան համեմատութիւնը: Նկատելով որ համեմատութեան եզրներից մինը — Բարձր Ա. դասարանը — 11 աշակերտ ունի, միւս դասարանների համար եւս առնւած է 11 աշակերտ: Ամէն մի առարկայից շահած նիշերի ընդհանուր զուամբը բաժանւած է նոյն դասարանի աշակերտութեան թւի վրայ և բազմապատկւած 11-ով: Համեմատութեան համար առնւած են այն վեց առարկայից ըստացւած նիշերի զուամբները, որ դասաւանդուում են այդ եօթն դասարաններում: Այսպիսով ստեղծւած են համեմատութեան հաւասար պայմաններ:

Քննելով այս համապատկերը մենք տեսնում ենք, որ վերին եօթը կարգերի մէջ աշակերտներն ամէնից աւելի հետեւած են Ֆրանսերէնի և ամէնից պակաս Կրօնի, եօթ դասարանի 77 աշակերտները տարւայ ընթացքին Ֆրանսերէնից շահած են 3690, ասել է ամէն մէկը 48, իսկ Կրօնից՝ 3270, այսինքն ամէն մէկը 42,5. Երկրորդ տեղը բռնում է Հայերէնը, որ տալիս է 3322, ուրեմն մարդագլուխ 45,5. իսկ երրորդ տեղը զբաւում է Ազգ. Պատմութիւնը, որ շահած 3479, հետեւապէս ամէն աշակերտ ստացած է 45: Այս թւերն արտայայտում են այն տրամադրութիւնները, որ իշխում են գաղութի բանիմաց դասի մէջ և որի արտայայտիչն է եղած Կրթական Յանձնախումբը, թելադրելով դաստիարակել նոր սերունդն իբր հայ, տալով նրան կեանքի մէջ յաջողելու մի զէնք — օտար լեզու: Կարծես ազդւած չըրջակայ մթնոլորտից՝ երեսները հետամուտ են օտար լեզուի տիրանալու, կառչած մնալով իրենց լեզուին և Ազգ. Պատմութեան, Ուսողութիւնը վերջընթեր տեղն է գրաւում, տալով 3310 նիշ, ուրեմն միջին հաշուով 43, իսկ գիտութիւնը համարեա Ազգ. Պատմութեան չափ գրաւած է աշակերտների ուշադրութիւնը, շահելով 3464, ասել է միջին հաշուով 45:

Միեւնոյն համապատկերից կարելի է տեսնել, որ ջանասիրութեան տեսակէտով առաջին տեղը զբաւում է Բարձր Ա. դասարանը՝ վեց առարկաներից տարւայ ընթացքին շահելով 3408. այնուհետեւ կարգով գալիս են Միջին Ա. երրորդ զուգընթաց — 3047, Միջին Բ. երկրորդ զուգընթաց — 2968, Միջին Ա. առա-

ջին զուգընթաց — 2930, Միջին Գ. — 2901, Միջին Ա. երկրորդ զուգընթաց — 2900 և վերջին տեղը Միջին Բ. առաջին զուգընթաց — 2581:

Համախմբելով զատ տախտակների մի քանի տւեալները մենք տեսնում ենք, որ աշակերտներն ամէնից աւելի աշխատած են Մարտ և Թունիս ամիսներին, այսինքն առաջին կիսամեակի քննութիւններից յետոյ, երբ նրանք բաժնւեցան ըստ յառաջդիմութեան լաւ, միջակ ու թոյլ խումբերի և տարւան վերջի քննութեան նախօրեակին: Թունիս ամսւան թւերը բարձրանում են քննական նիշերի շնորհիւ:

Այս տարի մեր վարժարանը տարւայ սկզբին ունեցած է 768 աշակերտ՝ 212 Մանկապարտէզի և 556 Նախակրթարանի մէջ \*): Սրանցից 380 հոգին աղջիկ են, իսկ 388 հոգին՝ մանչ: Աղջիկները կազմում են աշակերտութեան ընդհանուր թւի 49,4 առհարիւր, իսկ մանչերը՝ 50,6 առհարիւր: Տարւայ ընթացքին վարժարան մտել են 5 աղջիկ և 15 մանչ, ընդամենը 20 հոգի, որով աշակերտութեան թիւն աւելացել է 2,6 առհարիւր: Տարւայ ընթացքին վարժարանից ելած են 66 հոգի, որ կազմում է աշակերտութեան ընդհանուր թւի 8,7 առհարիւր: Սրանից 12 հոգին — 5 աղջիկ և 7 մանչ — հեռացել են Մանկապարտէզից, իսկ 54 հոգին — 33 աղջիկ և 21 մանչ — Նախակրթարանից: Տարւան վերջը մնացել են 722 հոգի. սրանցից 200-ը Մանկապարտէզում՝ աղջիկ 99 և մանչ 101, իսկ 522 ը Նախակրթարանում — 346 աղջիկ և 376 մանչ: Մինչդեռ տարւան սկզբին Նախակրթարանի մէջ աղջիկ ու մանչ համարեայ հաւասար էին, տարւայ վերջը մանչերի թիւը գերազանցում է, երկու սեռի տարբերութիւնը տարւայ սկիզբին լինելով 8, իսկ տարւայ վերջին 30. այսպիսով աղջիկները տարւայ վերջին աշակերտութեան 47,9 առհարիւր են կազմում, իսկ մանչերը 52,1 առհարիւր: Անցեալ տարի աշակերտութեան թիւը տարւան սկիզբին եղած է 570, իսկ տարւան վերջը 621: Այս տարի աշակերտների թիւը աւելցած է 100 հոգով: Այս յաւելումը բացարձակ է. Բարձր Ա. դասարանի պահելն այստեղ աննշան դեր է խաղում, քանի որ այդ դասա-

\* ) Տես տախտակ բիւ 22, 22 a, 22 b.

րանն ունի ընդամենը 12 աշակերտ: Աշակերտութեան թիւը յաւելուածը հիմնաւորում և արդարացնում է թէ՛ դպրոցական բիւտջէր մեծացումը և թէ՛ շինութեանց անհրաժեշտութիւնը:

Քննութեան առնելով աշակերտութեան բաշխումն ըստ դասարանների, մենք տեսնում ենք, որ Տարրական դասարաններում շատ աւելի աշակերտ ունինք, քան Միջին և Բարձր կարգերում: Նոյն համեմատութիւնն ունին և դասարանների թիւը: Մեր վարժարանն՝ առանց Մանկապարտէզի՝ ունի տարրական Ա. Բ. և Գ. կարգի ինն զուգընթաց դասարան, Միջին Ա. երեք զուգընթաց դասարան, երկու Միջին Բ. դասարան և մէկ մէկ Միջին Գ. և Բարձր Ա. դասարան. ընդամենը 17 դասարան, իսկ Մանկապարտէզը 6 դասարան, որով ամբողջ վարժարանն ունի 23 դասարան: Տարրական Ա. երեք զուգընթացներն ունին 119 աշակերտ, Տարր. Բ. երեք զուգընթացները— 116 և Տարր. Գ. երեք զուգընթացներ— 109. այսպիսով Տարրական երեք կարգերի ինն զուգընթացներն ընդամենը ունին 344 աշակերտ: Միջին Ա. երեք զուգընթացներն ունին 90, Միջին Բ. երկու զուգընթացները— 55 և Միջին Գ. դասարանը 21, ընդամենը 116, այսինքն Տարրական կարգերում եղածների կէսի չափ: Բարձր Ա. դասարանն ունի ընդամենը 12 հոգի: Աշակերտների թիւն այսպիսով նւազում է ուսման տարիներին հակադարձ համեմատութեամբ: Աշակերտութեան զանգւածը խոնարհ խաւերից լինելով՝ ծնողները շուտով զգում են նրանց կարիքը տնտեսութեան մէջ և հանում են դպրոցից: Այս հանգամանքը պէտք է որոշ ազդեցութիւն ունենայ կրթական ծրագրի և դասաւանդած նիւթի որակի վրայ: Պէտք է ջանալ մայրենի լեզուի գրաւորը և ուսողութեան տարրական կանոնները զօրացնել վարի կարգերում, որ աշակերտութեան մի սոււար մասը վարժարանը թողնելով՝ իմանայ գոնէ անսխալ գրել հայերէն և առօրեայ պարզ հաշիւներն անել:

Ինչպէս տեսանք այս տարի մեր նախակրթարանից ելած են 54 հոգի \*). սրանցից 34 աղջիկ են և 20 մանչ: Նայելով աշակերտութեան մուտքի և ելքի տախտակին՝ մենք տեսնում ենք, որ Տարրական կարգերից ելած են 20— 14 աղջիկ և 6 մանչ—, իսկ Միջին և Բարձր կարգերից 34 հոգի— 19 աղջիկ և 15 մանչ:

Այս 54 հոգուց 20 հոգի մտած են արհեստի, 16 հոգի մեկնած են քաղաքից, 6 հոգի դադրած են դպրոց յաճախելէ հի-

\* ) Տես տախտակ քիւ. 23.

ւանդութեան պատճառով, 4 հոգի մտած են օտար վարժարան և 8 հոգի ելած են զանազան պատճառներով: Զանազան պատճառների մէջ յիշատակութեան արժանի է մի ծնող, որ իր աղջկան հանել է, դէմ լինելով երկսեռ դրութեան, մի ուրիշ ծնող, որ իր երկու զաւակներին դադարել է վարժարան ուղարկել՝ անբաւարար նկատելով այն հսկողութիւնը, որ դասատուներն ունեցած են Տարր. Ա. կարգի երեխաների վրայ քաղաքից դուրս արած զքօսանքի ժամանակ և մի երրորդ ծնող, որ չի ցանկացել իր աղջիկը դպրոցի օգտին ձեռագործ անի: Այսպիսով վարժարանից դժգոհ լինելու պատճառաւ ելած են 4 հոգի, որ հեռացողների ընդհանուր թիւի 7,4 առհարիւր է կազմում: Նոյն անշան տոկոսն են կազմում և օտար վարժարան մտնելու համար հեռացողները:

Աշակերտներն ընդհանուր առմամբ դասերին յաճախել են անընդհատ: Բացակայութեանց տախտակին նայելով \*), նախակրթարանի ամէն աշակերտ տարւայ ընթացքին միջին հաշւով բացակայած է 7 օր: Բացակայութեան գլխաւոր պատճառը հիւանդութիւնն է եղած: Կան ծնողներ, որ իրենց զաւակներին առաւօտ կանուխ աշխատցնում են մինչեւ դասերի սկիզբը: Սրա համար երեխաները ստիպուած են լինում շատ վաղ դարթնելու և յոգնած են գալիս վարժարան: Այս հանգամանքը միանալով սնունդի պակասին՝ ստեղծում է նախ անուշադրութիւն, ապա՝ անտարբերութիւն և վերջն՝ անկարգութիւն: Այս տեսակները ամէնից յետամնաց և ամէնից անկարգապահ աշակերտների դասն են կազմում: Ուշացումները երկու գլխաւոր պատճառ ունին. առաջինը սնունդի պակասն է, որ երեխան լրացնում է քնելով. երկրորդը՝ քաղաքի մեծութիւնը և տների հեռաւորութիւնը: Եթէ բացակայութեան խնդիրը քննենք հասակի տեսակէտով, այն ժամանակ կը տեսնենք, որ տարրական երեք կարգերը իրենց 344 աշակերտով բացակայած են 3176 օր, ասել է ամէն աշակերտ միջին հաշւով բացակայել է 9 օր, իսկ միջին և վերին կարգերի աշակերտները, որ 178 հոգի են, բացակայած են 803 օր, այսինքն միջին հաշւով ոչ իսկ 5 օր: Այսպիսով մեծերը փոքրերից երկու անգամ պակաս բացակայութիւն ունին, որ նշանակում է՝ պակաս ենթակայ են հիւանդութեանց:

Տնօրէնութեան գործերից մէկն եղաւ բանական հիմքերի

\* ) Տես տախտակ քիւ. 24.

վրայ դնել զպրոցավարութեան գործը և ազատել այն պատահական արամադրութիւններէրց և ազգեցութիւններէրց: Այս նպատակով մենք պատրաստեցինք երկու յուշագիր, որոնցից մէկը Յունեա-րին՝ թոշակների վերաբերեալ և միւսը Ապրիլին՝ դասատուների վարձատրութեան մասին: Առաջին յուշագրով առաջարկում էինք վճարող ծնողներին երեք կարգի բաժանել և կրթական չորս աս-տիճանների համար տարբեր թոշակներ դանձել. այսպիսով թո-շակները տասներկու տարբեր չափեր կ'ունենան, նայած թէ ծնո-ղը իր վճարողական կարողութեամբ ո՞ր կարգին է պատկանում և իր զաւակը ո՞ր կարգի մէջ է ուսանում՝ Մանկապարտիզում, տարրական, միջին թէ՞ բարձր կարգերում: Գաղութի անտեսա-կան վիճակին զուգընթաց՝ այս սակերը կարելի է մեքենայէս բարձրացնել կամ իջեցնել որոշ տոկոսով, Սրանով մի կարգ է հաստատում թոշակների բաշխման գործի մէջ:

Գտլով դասատուների վարձատրութեան խնդրին՝ մենք ա-ռաջարկեցինք հետեւեալ զրուցութիւնը. 1) տարբերել տարրական և բարձր ու միջին կարգերի դասագինը, տարրական կարգերի շա-բաթական մէկ պահը տարեկան վարձատրել երեք ոսկի, իսկ միջին և բարձր կարգերի մէկ պահը — հինգ ոսկի: Շաբաթա-կան պահերի այս սակը կազմելու է վարձատրութեան ողնաշա-րը, Այնուհետեւ՝ 2) տարբերել դասատուներին ըստ իրենց փոր-ձառութեան՝ իրենց պաշտօնավարութեան ամէն մէկ հնգամեակի համար վճարելով տարեկան վեց ոսկի: 3) Տարբերել գրաւոր ու-նեցող և չունեցող առարկաները և ամէն մի դասարանի գրաւոր աշխատանքի համար տարեկան վճարել երեք ոսկի: 4) Տարբե-րել դասատուների կրթութեան աստիճանը և ըստ այնմ սահմա-նել մի որոշ յաւելում՝ առաջին երեք հիմքերով ստացած վարձա-տրութեան վրայ: 5) Դասերից դուրս վարած պաշտօնների հա-մար դասատուներին վարձատրել առանձին: Եթէ այս սկզբունք-ները խստորէն պահելին՝ միանգամից վերջ կը դրւի բոլոր քմա-հաճոյքներին և կողմնակի ազգեցութիւններին դասատուների վար-ձատրութեան գործում: Այս սակերը նոյնպէս կարող են որոշ տոկոսով բարձրանալ և իջնել՝ նայած ազգային եկամուտների մեծութեան:

Այս երկու յուշագրերի մէջ արծարծած սկզբունքները արժա-նացած են Հոգաբարձութեան հաւանութեան:

Մեր զեկուցումը թերի կը լինէր եթէ չխօսէինք թոշակների մասին: Ինչպէս կը տեսնէք վարժարանի նւթական հաշուկոյցից,

այս տարի թոշակ նախահաշւած էր 600 ոսկի: Քննելով թիւ 25 տախտակի թւական տւեալները, մենք տեսնում ենք, որ իսկա-պէս թոշակ պահանջւած է 54242 զրշ., ասել է 5758 զրշ. պա-կաս, քան սպասում էր նախահաշւով \*) : Մինչեւ տարւան վեր-ջը գանձւած է 52064 զրշ., որ ասել է՝ ապուիկ մնում է 2178 զրշ.: Մեր վարժարանը մտած 788 աշակերտներից միայն 345 հո-գին են, որ թոշակ են վճարում, այսինքն աշակերտութեան 43,8 առհարիւր, որ կէսից պակաս է. մնացած 443 հոգին, այ-սինքն 56,2 առհարիւր ձրիավարժ են: Յիշեալ 345 հոգին է, որ պիտի վճարէին նախահաշւած 600 ոսկին, այսինքն մարդագլուխ 174 զրշ.: որ մի չնչին գումար է օտար վարժարանների պա-հանջած թոշակի համեմատութեամբ: 345 ծնողներից 200-ը, այ-սինքն 57,7 առհարիւր պակաս են վճարում քան այդ գումարը: Թոշակների չափը տարուբերում է 45—360 զրշ. ի միջեւ՝ նւա-զագոյն ամսակունը լինելով 5 զրշ., իսկ առաւելագոյնը՝ 40 զրշ.: Այս աննշան թոշակները շատ աւելի չնչին կը դառնան, եթէ հա-մեմատենք այն ծախսի հետ, որ նստում է ամէն մի աշակերտ Ազգ. իշխանութեան վրայ: Այս տարւան ծախսերի գումարն էր 3500 ոսկի. այս գումարը բաժնելով 788 աշակերտի վրայ՝ մար-դագլուխ կը ստանանք 444 զրշ.: Ուրեմն ամէն աշակերտի հա-մար Ազգ. իշխանութիւնը ծախսում է 444 զրշ. և դրա դիմաց ամենաշատը ստանում է 360, իսկ ամենաքիչը՝ 45 զրշ., այսինքն ամէնից աւելի վճարողը 84 զրշ., իսկ ամէնից պակաս վճարողը 400 զրշ. պարաք են մնում ազգային սնտուկին: Այսպիսով մեր գաղութն ապրում է ազգային սնտուկի հաշւին և հարուստ թէ բարեկեցիկ նրանից ողորմութիւն են ստանում իրենց զաւակ-ների կրթութեան համար: Այս եզրակացութիւնն, անշուշտ, շատ պիտի զարմացնի այն բոլոր ծնողներին, որ միամիտ ինքնագո-հութեամբ կարծում են, թէ իրենց զաւակների կրթութեան ծախսն իրենք են հոգում: Ծնողների աւած թոշակագրամը հազիւ բաւական է շինութեան վերաբերեալ մանր ծախսերը և տնտեսների ոռոգիկը հոգալու համար: Եթէ 345 աշակերտների ծնողները վճա-րէին այնքան, որքան նստում է իրենց զաւակի կրթութիւնն ազ-գային սնտուկի վրայ, այն ժամանակ թոշակները ոչ թէ 600, այլ 1531 ոսկի կը բռնէին և համայնքի շքաւոր երեխան ո՛չ միայն ձրի ուսում կը ստանար, այլ նաև գիրք, հագուստու

\*) Տես տախտակ 26.

ճաշ: Ահա՛ այս գիրքը, հագուստն ու ճաշն է, որ մեր համայնքի հարուստ ու բարեկեցիկ խաւը խլում է չքաւոր աշակերտից և տալիս է իր զաւակին: Չվճարելով իրենց զաւակների ուսման լրիւ արժէքը, նրանք լցնում են Ազգ. վարժարանը 345 աշակերտ, նորանոր ծախսերի դուռ բանալով ազգային սնտուկի առջև. նոր դասարանների կառուցում, նոր դասատուների հրաւիրում, նոր գրասեղաններ ևն.: Արդար լինելու համար՝ այս բոլոր ծախսերը պէտք է անւէին ունեւոր դասի հաշին, քանի որ չքաւոր դասն ունի իր վարժարանը ապահով եկամուտներով: Եկեղեցու եկամուտն անբաւարար է մինչեւ իսկ իր ընթացիկ ծախսերը հոգալու համար: Այսպիսով մեր գաղութը ո՛չ իր եկեղեցին է պահում ոչ իր դպրոցը, այլ ապրում է չքաւորների և բարերարների հաշին: Հազիւ թէ այս կացութիւնը պատւաբեր նկատւի այն մարդկանց համար, որ սիրալով կարծում են ոմն լինել: Ամէն մի պատւազգած մարդ պէտք է ջանայ չապրել ազգային սնտուկի հաշին, և եթէ չի կարող իր համայնքի եկամուտներն աւելացնել, գոնէ պէտք չէ օգտւի այն գումարներից, որ չքաւորին են յատուկ: Որովհետեւ ո՛վ է վերջապէս բարերարների թողած կտակներից օգտւելու, համայնքի հարուստն ու բարեկեցիկը թէ չքաւորը: Կարծում ենք՝ չքաւորն ու անօդնականը: Կտակներն ազգի անուշով են, բայց ազգի բոլոր անդամների համար չեն. ազգն իրաւունք ունի իր ընտրած Իշխանութեան ձեռքով տնօրինելու այդ կտակների գործադրութիւնը, բայց նա իրաւունք չունի կտակաւոր բաժնելու իր բոլոր անդամների միջև. իբրեւ հայ համայնքի անդամ նա կտակակատար է, բայց ոչ ժառանգորդ:

Թոշակների տախտակը տխուր մտածութեանց առիթ է տալիս և մի ուրիշ տեսակէտից: Եթէ հաշի չառնենք հինգ աշակերտ, որոնցից երկուսը ամսական վճարում են 40 դր., իսկ երեքը — 36,5. մնացածներն ամսական 30 դր. աւելի չեն վճարում: Իսկ եթէ դուրս թողնենք 14 աշակերտ, որոնցից ութը ամսական վճարում են 7,5 դր., իսկ վեցը — 5 դր., այն ժամանակ կը ստանանք 326 աշակերտ, որոնց վճարած թոշակները դեգերում են 10—30 դր. ի սահմաններում: Այստեղ սակից սակ անցումները 1,5—3 դր. են. վճարումները լինում են ոչ թէ 10, 15, 20, 25, 30 դր., այլ 10, 12,5, 15, 18, 20, 21,5, 23, 25, 27,5 դր., ասել է ամէն ծնող աշխատում է մի բան փրցընել ազգային սնտուկից, թէկուզ և այդ բանը լինի ամենաչափ

տարեկան 27 դր. և ամենաքիչը 13,5 դր.: Ահաւասիկ համայնքի անմխիթար պատկերը:

Եւ այս չնչին ու զեղչւած թոշակները վճարում են մեծ անպարտաճանաչութեամբ: Տեսանք, որ թոշակներից դեռ 2178 դր. մնում է ապառիկ: Ոմանք այն հաշուով են թողնում ապառիկ, որ ուսումն. տարւայ վերամուտին պարտքը զեղչել յաջողին: Դեռ անցեալ տարւան Նոյեմբ. 6-ին յատուկ տոմսեր ուղարկեցին ծնողներին, յայտնելով որ թոշակները վճարեն անձամբ, քանի որ հաւաքչի դրութիւնը վերացած է: Դեկտ. 20-ին նորից յատուկ տոմսեր են ուղարկւում, որ յետնեալ թոշակները վճարեն: Յունւարի 7-ին յատուկ գրութեամբ ազգարարում են ծնողներին, որ եթէ ժամանակին թոշակները չվճարեն՝ նրանց զաւակները վարժարանից տուն կ'ուղարկւեն: Չնայած այս բոլոր միջոցներին, պարտաճանաչ ծնողների թիւը երբեք 50-ի չհասաւ: Անցնելով մեր պաշտօնին՝ մենք պայման դրինք, որ դասատուները ազատ մնան գանձումներ անելու պարտականութիւնից. նիւթականի խնդիրը համարելով Ազգ. Իշխանութեան գործ: Մենք չկամեցանք, որ աշակերտը տուն ուղարկւի իր իսկ դաստիարակի միջոցով. մենք սա համարեցինք բարոյական ծանր հարւած աշակերտին և դաստիարակին: Բայց ծնողների յամառ անպարտաճանաչութիւնն ստիպեց քանդել այն կապը, որ կամեցանք սահղծել դասատուների և աշակերտների միջև և Ազգ. Իշխանութեան կարգադրութեանն անսալով ստիպւած եղանք աշակերտին տուն ճամբելու ծանր պարտականութիւնը դնել դասատուներից մէկի վրայ, ջանալով մեղմել չարիքի չափը: Ի՞նչ դռնիկ հարւած ուղղւած անպաշտպան աշակերտի արժանապատւութեան. — թողնել դասերը և գրքերն առած վերադառնալ տուն իր անպարտաճանաչ հօր մեղքի պատճառով: Ո՛րքան դասերից զրկւեցին երեխաները: Եւ ի՞նչ սրտով դաս պիտի ունկնդրէին, երբ գիտէին թէ կարող են տուն ճամբել: Ի՞նչպէս կարողանանք բարոյապէս ազդել երեխաների վրայ, երբ ծնողների պատճառով խղւում են բարոյական կապերը դաստիարակի և աշակերտի միջև, երբ դասատուն դառնում է հարկահան և աշակերտը բարոյապէս տուժում է ծնողների պատճառով: Թողնել, որ անպարտաճանաչն ու անպատկառ որդի լինի Ազգ. Իշխանութեան գէժ կր լինէր անթոյլատրելի ապիկարութիւն. իսկ խստիւ հետապնդել, որ եղած կարգադրութիւնը կատարուի՝ կը նշանակէր երեխաների և դաստիարակների հոգին պղտորել: Եւ ցաւալին այն է, որ ծնողները կամովին թէ ստիպւած՝ բայց վճարում էին, սա-

կայն ոչ ժամանակին, սակայն ջանալով երկարածգել, սակայն վնասելով իրենց զաւակի հոգուն, դասատուների վարկին և իրենց արժանապատուութեան: Պէտք է միջոցներ ձեռք առնեն այս դարչելի քաջըջուկին վերջ տալու համար. պէտք է երեխաներն ազատել դռնհիկ և վարկարեկիչ տեսարաններից, պէտք է խնայել նրանց արժանապատուութեան արթնացող զգացումը, պէտք է ազատել դասատուներին հարկահանի պաշտօնից և թողնել որ աշակերտի հետ միմիայն բարոյական կապեր մշակեն:

Չենք կարող ասել թէ մեր վարժարանն այս տարի հանրութեան յատուկ ուշադրութեան և դուրգուրանքի առարկան եղաւ: Ծնող թէ հանրութիւն կենդանի հետաքրքրութիւն չունեցան դէպի դպրոցն ու մեր աշխատանքը. ինչպէս նաեւ դէպի աշակերտների վիճակը, Բայց և այնպէս եղան անհատներ ու խմբեր, որ իրենց բարոյական ու նիւթական աշակցութեամբ քաջալերեցին մեզ և աշակերտներին: Թեմիս Սրբազան Առաջնորդ թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան՝ ամէն անգամ, որ առիթ ունեցաւ քաղաքս դալու, բարեհաճեց այցելել մեր վարժարանը և հետեւել դասաւանդութեան և քննութեանց ընթացքին: Առաջնորդական փոխանորդ Մամբրէ ծ. վ. Սիրունեան, Բաղաքական Ժողովի անդամ պ. Հ. Փէհրիզեան, Հոգարարձութեան ատենապետ պ. Մ. Նորատունկեան յաճախ այցելած են մեր վարժարանը և հետեւած են թէ՛ դասերին և թէ՛ քննութիւններին: Չեկուցմանս կցած թիւ 27 տախտակի վրայ նշանակւած են այն նւէրները, որ այս տարի ստացել է մեր վարժարանը: Երջանաւարտների միութիւնը, որ կազմւած է պ. Ս. Պետրոսեանի նախաձեռնութեամբ, միակ խմբակն եղաւ, որ իր կարողութեան համեստ սահմանում օգնութեան հասաւ մեր չքաւոր աշակերտներին, բաժնելով նրանց 1850 տետրակ, 792 մատիտ, 29 գիրք և հոգալով մի աշակերտուհու սնունդի դրամը, այս ամէնի համար ծախսելով 1022,5 դր. : Մեր վարժարանն իր հերթին 142 աշակերտի բաշխած է 1765 դր. : արժողութեամբ գիրք, որ ասել է միջին հաշւով ամէն աշակերտի 12,5 դր. : Ո՛րքան չնչին դրամով որքան օգտակար գործ է կատարուած, եթէ դադուեթը հոգով կենդանի լինէր, այս կարգի գործերը կը հաւասարէին կարիքի մեծութեան:

Տարւայ ընթացքին մենք ունեցանք «կամք» մարմնամարզական միութեան անվերապահ աջակցութիւնը. որ իր հետադաստիչների խումբը արամադրեց մեր հանդէսների կարգապահութեան

համար և չզլացաւ իր մարզանքի իրերը, երբ նրանց պէտքն զգացինք: Մեզ օժանդակեց Աղեքսանդրիոյ Աղքատախնամը, հոգալով չքաւոր աշակերտների դեղորայքը և ակնոց գնելով մի քանի կարճատես երեխաների համար: Մեզ օգնեց նաև շրջանաւարտների փոքրիկ երաժշտական խումբը, որ նւագեց մեր հանդէսներին:

Այն բոլոր հաստատութիւններին, խմբերին և մտանաւոր անձանց, որ նիւթապէս և բարոյապէս նպաստեցին մեր գործին, յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

Ուրիշ տարիների նման մեր վարժարանն այս տարի ևս ունեցաւ մի քանի աշակերտական հանդէսներ: Մանկապարտէզը մի ցերեկոյթ կազմակերպեց Յունւարի 12-ին. Նախակրթարանի տարրական կարգերն իրենց հանդէսը տւին Յունւարի 13-ին ճաշից առաջ, իսկ Միջին և Բարձր կարգերը նոյն օրը ճաշից յետոյ: Այս հանդէսներին ծնողներ չէին հրաւիրւած՝ տեղի սղութեան պատճառով. վարժարանի սրահը դեռ պատրաստ չէր և հանդէսները տեղի ունեցան Մանկապարտէզի փոքրիկ սրահում:

Անցեալ տարիների նման այս տարի Մայիս ամսին աշակերտները առաջնորդեցան քաղաքից դուրս Նուզհայի պարտէզը դրօսանքի՝ մանչ և աղջիկ զատ-զատ խմբերով. Երեխաների շատութեան պատճառով այդ դրօսանքները կատարւեցան վեց անգամով:

Տարւայ ընթացքին պ. Գ. Թագուրեանի և պ. Ս. Պետրոսեանի միջոցով ստուգման ենթարկւեցաւ վարժարանիս Մատենադարանը, իսկ պ. Չ. Պալեան բարձր Ա. դասարանի աշակերտների աջակցութեամբ մաքրեց և ցուցակագրեց վարժարանի բնագիտական գործիքներն ու անօթները:

Տարւայ վերջին կազմակերպեցինք երկու հրապարակային հանդէս. մէկը Մանկապարտէզի հանդէսն էր, որ տեղի ունեցաւ Յունիսի 29-ին Մանկապարտէզի շրջափակին մէջ Առաջնորդական փոխանորդ Մամբրէ ծ. վ. Սիրունեանի նախազահութեամբ և միւսը Նախակրթարանի հանդէսը, որ տեղի ունեցաւ Յունիս 6-ին վարժարանիս շրջափակի մէջ, նախազահութեամբ թեմիս Սրբազան Առաջնորդ թորգոմ Եպոս. Գուշակեանի: Նոյն օրը վարժարանի երեք դասարանների մէջ կազմակերպւած էր դպրոցական ցուցահանդէս, ուր ցուցադրւած էին անցեալ և այս տարւան ձեռագործները, աշակերտների դժած նկարները, նրանց առաջին և երկրորդ կիսամեակի գրաւոր աշխատանքները, նրանց չրջիկ տետ-

րակները տարբեր առարկաներից, նրանց պատրաստած երկրա-  
չափական իրերն ու օրինակները, Մանկապարտէզի ձեռական աշ-  
խատանքները և բազմաթիւ թւական տախտակներ և գծապատ-  
կերներ, որ ներկայացնում էին վարժարանը զանազան տեսա-  
կէտներից: Նոյն օրը ձեռագործների վիճակահանութիւն տեղի  
ունեցաւ, որի տոմսերը ծախւած էին նախապէս և զնւեցան նաև  
այդ օրը: Սրբազան հօր բացման խօսքից յետոյ Տնօրէնը բերա-  
նացի հաշւետուութիւն արաւ դպրոցի կրթական, բարոյական եւ  
ֆիզիքական վիճակի մասին: Այնուհետեւ աշակերտներն ու ա-  
շակերտուհիները մարզանքի և զանազան մրցութեանց խաղեր  
ցուցադրեցին դասատու պ. Ս. Խանձեանի ղեկավարութեամբ:  
Յաջողագոյնները ստացան մէդալներ և զանազան իրեր՝ իբր մր-  
ցանակ: Մէդալները նւիրել էին մասնաւոր անձեր, իսկ իրերը  
գնւած էին վարժարանի միջոցներով: Նկարչութեան դասատու  
պ. Հ. Փանոսեան իր սեփական միջոցներով գնած էր հինգ դա-  
ձէ արձաններ, որ իբր մրցանակ բաշխւեցան նկարչութեան մէջ  
յաջողագոյն աշակերտներին: Հանդէսի վերջին Սրբազան հայրն  
իր փակման խօսքի ընթացքին գնահատելով վարժարանի մէջ կա-  
տարւած աշխատանքը, ցանկութիւն յայտնեց, որ Տնօրէնի ղե-  
կուցումը տպագրւի:

Դասատուների խումբն այս տարի ընդհանուր առմամբ աշ-  
խատեց եռանդով և բարեխղճութեամբ: Նայելով նրանց բացակա-  
յութեան տախտակին, մենք տեսնում ենք, որ Նախակրթարանի  
մէջ ամէն մի դասատու միջին հաշւով բացակայած է 2 օր, իսկ  
Մանկապարտէզում 7 օր: Այդ աշխատանքը կատարւեց միաս-  
նաբար և համերաշխ, մէկ ընդհանուր նպատակի ձգտելով: Այդ  
համերաշխութիւնը ստեղծեց գործունէութեան մի առողջ մթնո-  
լորտ, որ մեծապէս նպաստեց ընդհանուր գործի յաջողութեան:  
Մեր գործի յաջողութեանը ոչ պակաս նպաստեց և Հոգաբար-  
ձութեան և Բարաքական Ժողովի բանիմաց պատրաստակամու-  
թիւնն ընդառաջ գնալու այն բոլոր պահանջներին, որ անոււմ  
էին վարժարանի անունով և նրա համար: Հանրային մարմիննե-  
րի և տարրերի գործակցութեան մէջ է ամէն յաջողութեան գաղտ-  
նիքը: Յուսով ենք, որ այդ բարեացակամ գործակցութիւնը մենք  
կ'ունենանք և առաջիկայ տարին:

Տնօրէն «Պօղոսեան» Ազգային Երկսեռ Վարժարանի  
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՇԵՆՔԸ ՕՐԻ ԾԱԽԱԼԻ ՏԵՍԱԿԵՏՈՒ

ԴԱՍԱՌԱՆՆԵՐ	ԾԱԽԱԼ	ՕՐԻ ՊԱԿԱԸ	ՄԱՍՈՒՄՆԵՐԸ	ՍԱՆՅՈՒՄՆԵՐԸ
Կարգ Ա. I	89,31	144,69 <sup>2</sup>	39	1
„ Ա. II	88,06	139,84	38	
„ Բ. I	112,32	61,68	29	
„ Բ. II	88,16	79,84	28	
„ Բ. III	112,32	85,68	33	
„ Բ. IV	119,25	72,75	32	
Դահլիճ	204,75	275,25		
Ձեռագործի դասարան	96,28	263,72		

1 Այստեղ առնուած է 1924 թ. Փետրուարին եղած աշակերտներու թիւը:  
2 Պակապղը նաշուբաւ է ո՛չ թէ օրինակի դասարանի նամեմատութեամբ, այլ եղած աշակերտներուն անհրաժեշտ օրի բանակութեամբ:  
3 Դահլիճը նաշուբաւ է 80 աշակերտի նամար եւ ըստ այնմ որոշուած է պակապղը:  
4 Ձեռագործի սենեակը նաշուբաւ է 40 աշակերտու-նու նամար եւ ըստ այնմ որոշուած է պակապղը:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԷՆՔԸ ՅԱՏԱԿԻ ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ ՏԵՍԱԿԵՏՈՎ՝

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԼՈՅՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ	ԿԸ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԼՈՅՍԻ	ԿԸ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ	ԿԸ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԼՈՅՍԻ	ԿԸ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ
Կարգ Ա. I	39	22,01	36,49	3	4,05	6,09	4,05	3	4,05	6,09
„ Ա. II	38	25,90	31,10	3	4,05	5,83	4,05	3	4,05	5,83
„ Բ. I	29	28,08	25,92	3	4,05	3,49	4,05	3	4,05	3,49
„ Բ. II	28	22,04	19,96	2	2,70	4,58	2,70	2	2,70	4,58
„ Բ. III	33	28,08	21,42	3	4,05	3,53	4,05	3	4,05	3,53
„ Բ. IV	32	23,05	24,95	2	2,86	5,46	2,86	2	2,86	5,46
Գանձիճ	80 :	40,95	79,05	2	2,86	78,34	2,86	2	2,86	78,34

ՄԵՏՈՒՔԵԱՆ

SE՛ս տախտակ թիւ 3 ծա-  
նօթագրութիւնները :

Գանձիճը հարչուքում է 80  
աշակերտի նամար :

ՊՕՂՈՒՔԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՇԷՆՔԸ ՕԴԻ ԾԱՒԱԼԻ ՏԵՍԱԿԵՏՈՎ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԼՈՅՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ	ՕԴԻ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԼՈՅՍԻ	ՕԴԻ ՊԱԿՍԻ	ՄԵՏՈՒՔԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ	ՕԴԻ ՊԱԿՍԻ
Տար. Ա. I	110,05	39	123,95	39	123,95	110,05	39
„ Ա. II	220,50	40	19,50	40	19,50	220,50	40
„ Ա. III	220,50	39	13,50	39	13,50	220,50	39
„ Բ. I	220,50	40	19,50	40	19,50	220,50	40
„ Բ. II	196,—	41	44,—	41	44,—	196,—	41
„ Բ. III	91,80	32	100,20	32	100,20	91,80	32
„ Գ. I	236,—	37	4,14,—	37	4,14,—	236,—	37
„ Գ. II	232,—	37	10,—	37	10,—	232,—	37
„ Գ. III	132,30	39	101,70	39	101,70	132,30	39
ՄԻԶԻՃ Ա. I	175,75	24	31,75	24	31,75	175,75	24
„ Ա. II	137,50	29	36,50	29	36,50	137,50	29
„ Ա. III	127,50	30	52,50	30	52,50	127,50	30
„ Բ. I	147,50	29	26,50	29	26,50	147,50	29
„ Բ. II	148,50	32	43,50	32	43,50	148,50	32
„ Գ.	126,—	26	30,—	26	30,—	126,—	26
Բարձր. Ա.	76,—	13	2,—	13	2,—	76,—	13

ՄԵՏՈՒՔԵԱՆ

Օրինակի դասարանի երկարութիւնը պետք է ըլլայ  
10 մէթր, լայնութիւնը՝ 8, իսկ բարձրութիւնը՝ 4,50,  
Ըստ այնմ յատակի մակարդակը պետք է ըլլայ  
10 X 8 = 10 քմ. մքր., իսկ օդի ծաւալը 10 X 8  
X 4,50 = 360 մ.՝ նուազագոյն չափով անկն ա-  
շակերտի պետք է իլնայ 1,50 յատակ եւ 6 խոր.  
մք. օդ :

2 Այստեղ աւանդած է այս նետաօտարիւնը կառար-  
ուած ժամանակահատան աշակերտութիւնը (1924 Փետ.),  
ուստի անոնց բանակը նամենատական չէ ամա-  
վերջի բիւրուան :

3 Պակարդը հարչուքում է ոչ բէ օրինակի դասա-  
րանի նամենատարեան, այլ եղած աշակերտնե-  
րուն անհրաժեշտ օդի նամենատարեան :

4 Աստղանիցը կէ ցոյցնէ բէ դասարանին մէջ եղած  
օդի բանակը պահանջուածնէ բանի՞ խոր. մ. անէի է .

ՊՐՈՂՈՍՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ ԴԵՆՔԸ ՅԱՏԱԿԻ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԼՈՅՍԻ ՏԵՄԱԿԵՏՈՎ՝

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	ԴՎԿԵՐՏԻՆԻ ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ	ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ
Տարր. Ա. I	39 <sup>2</sup>	22,01	36,49 <sup>3</sup>	2	4,84	5,30 <sup>4</sup>	1	0,16	0,16	0,16
» Ա. II	40	44,10	15,90	4	9,68	0,72	2	0,72	0,72	0,72
» Ա. III	39	44,10	14,40	6	14,52	3,38	6	3,38	3,38	3,38
» Բ. I	40	44,10	15,90	6	14,52	4,12	6	4,12	4,12	4,12
» Բ. II	40	39,20	20,80	2	4,84	5,56	2	5,56	5,56	5,56
» Բ. III	32	27,—	21,—	3	7,26	2,06	3	2,06	2,06	2,06
» Գ. I	37	47,20	8,30	4	9,68	0,06	4	0,06	0,06	0,06
» Գ. II	37	46,40	9,10	4	9,68	0,06	4	0,06	0,06	0,06
» Գ. III	39	26,46	32,04	2	4,84	5,30	2	5,30	5,30	5,30
Միջին Ա. I	24	35,75	0,25	2	4,84	1,40	2	1,40	1,40	1,40
» Ա. II	29	27,50	16,—	2	4,84	2,70	2	2,70	2,70	2,70
» Ա. III	30	25,50	19,50	2	4,84	2,96	2	2,96	2,96	2,96
» Բ. I	29	29,50	14,—	2	4,84	2,70	2	2,70	2,70	2,70
» Բ. II	32	33,—	15,—	2	4,84	4,48	2	4,48	4,48	4,48
» Գ.	26	28,05	10,95	2	4,84	1,92	2	1,92	1,92	1,92
Բարձր. Ա.	13	15,20	4,30	1	2,42	0,96	1	0,96	0,96	0,96

ԿՈՒՆԿԵՐՏՈՒՄ

1 Օրինակների դատարանի ապահիներու մովկերեայրը պետք է կազմե առ առանձին յատակի 1)3-ը եւ առ նուազն յատակի 1)4-ը.  
2 Այստեղ ամուսնացած է 1924 Փետրուարին եղած աշակերտներու թիւը.  
3 Պակարդը նարուբած է եղած աշակերտներու պահանջի նամեմատութեամբ.  
4 Պակարդը նարուբած է եղած աշակերտներու պահանջի նամեմատութեամբ, բնութեամբ որ ամեն աշակերտի պետք է իյնայ 26 ս. մ. ապակի.

Հ Ա Շ Ո Ւ Ե Ց Ո Յ Ց  
ՎԵՐԻՆ ԿԱՐԳԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՄԱՑ ԻՆՍՏՐԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻ

ԱՄԻՍՆԵՐ	Դ Ա Ս Ա Ր Ա Ն Ն Ե Ր				
	ԲԱՐՁՐ Ա.	ՄԻՋԻՆ Գ.	ՄԻՋ. Բ. I	ՄԻՋ. Բ. II	ԸՆԴԱՄԵՆԸ
1924 Յունուար	21.5	50.1	19.3	49.2	140.1
» Փետրուար	19.	59.5	45.3	40.8	164.6
» Մարտ	18.4	53.2	27.6	71.7	170.9
» Ապրիլ	19.4	46.3	20.5	35.2	121.4
» Մայիս	17.7	36.7	14.8	28.6	97.8
» Յունիս	16.—	30.7	14.7	21.—	82.4
» Յուլիս	8.2	—	—	—	8.2
Ընդհ. գումար	120.2	276.5	142.2	246.5	785.4

**ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԶԵՌԱՄԲ ԿԱՍՄՐՈՒԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	Ղ. Ո.		Ղ. Ո.	
<b>1. — Որքերու Կիրակիք</b>				
Նախակրթարան	810	—		
Մանկապարտեզ	175	—	985	—
<b>2. — Որբախնամի զանձկ. քիւ 39</b>				
Մանկապարտեզ			129	5
<b>3 — Որբախնամի կամուսնեհրով հանգանակութիւն</b>				
Նախակրթարան	8816	1		
Մանկապարտեզ	1437	—	10253	1
<b>ԸՆԳԻ. գումար</b>			<b>11367</b>	<b>6</b>

**ԾԱՆՈԹ — Այս հանգանակութիւններու մէջ առաջնութիւն զտես են.**

Նախակրթարանի՞	Նուարդ Ազգլեան	355
	Շնորհիկ Զատայեան	300
Մանկապարտեզի՞	Պարեա Գալժայեան	
	Սօնա Թլնկլըր	

**ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԾՆՈՂՆԵՐԸ**

ԸՍՏ ԴԱՍԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ

Վարժարանի աշակերտներու 445 ծնողները, ըստ Տնօրինութեան հաւարած տեղեկութեանց, կը բաժնուին հետեւեալ դասերուն

**1923-1924**

ԾՆՈՂՆԵՐՈՒ ԶԲԱՂՈՒՄԸ	ԲԱՆՔ ԱՆՁ	%
Պաշտօնեայ	42	9.5%
Արհեստաւոր	234	52.5%
Վաճառական (մեծարն. եւ փոքրարն.)	128	29.1%
Պաշտօնական զբաղումներ	14	3.2%
Գործաւորներ	27	5.8%
<b>Ընդմ. Գումար</b>	<b>445</b>	

ՊՐԵՍԵՆՍԱՆ ԱԶԳ. ԵՐԿԱՆՈՒ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՑԻՋԻՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՏՐՈՒԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

ՋԱՆԱԶԱՆ ՄԱՆՆԱՎԱՐՄԱՆ ԳՐԲԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1923-1924

ԿԱՐ ԳԱ ԵՒԻ	ՌԻՍՈՒՑԻՋ	ՆԻՏԵ	ՇԵՂԻՆԱԿ
1	Պ. Պ. Յազարյան	La réforme de l'éducation nationale	par Hersent
2	Պ. Զ. Պարյան	L'Enseignement du calcul	„ C. A. Laisant
3	Պ. Հ. Ասիրյան	Petite histoire universelle	„ E. Granger
4	Օր. Ս. Գալիբեկյան	I. L'éducation ménagère des jeunes filles	„ H. Dollidon
		II. Economie domestique, I, II,	„ R. El. Chalamet
5	Պ. Ն. Յազարյան	Géographie I, II, III,	„ P. Foncin
6	Տիկ.Վ. Տերաթևյան	De l'enseignement des langues vivantes	„ Ch. Sigwalt
7	Պ. Մ. Ասիրյան	Leçons de choses, I, II, III,	„ Ledoux
8	Պ. Հ. Փամբուկյան	Le dessin au brevet élémentaire	„ Gaston Quénioux
9	Պ. Պ. Յազարյան	Comment former l'esprit	„ Dr. Toulouse

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. — ԴԱՄԱՐԱՆԻ ՔԻՒ 11 ՀՈԳԻ

ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹՅՔԸ ՊԱՏԿԵՐԱՅՆՈՂ ՏԱԽՏԱԿ

ԱՐԻՍՏԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՌԵՆ	ԳՂԱԲԱՐ	ՖՐԱՆՍ.	ՀԱՅՈՑ ՊԱՏՅՔ.	ԸՆԴՀ. ՊԱՏՅՔ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՄԱՐ
Հոկեմ. Նույնի.	88.—	88.—	80.—	100.—	90.—	88.—	93.—	94.—	721.—
Գեղեկեցիք.	88.—	88.—	82.—	86.—	90.—	80.—	94.—	96.—	704.—
Յուն. Փետ.	84.—	88.—	86.—	98.—	94.—	86.—	98.—	102.—	736.—
Մարտ	88.—	94.—	94.—	96.—	94.—	92.—	96.—	98.—	752.—
Ապրիլ Մայիս	91.—	94.—	90.—	92.—	96.—	91.—	95.—	90.—	739.—
Յունիս	93.5	97.5	93.—	106.—	105.5	93.5	95.—	108.—	792.—
	532.5	549.5	525.—	578.—	569.5	530.5	571.—	588.—	4444.—

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՐԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

I.— Աստուրաբլան	588.—
II.— Ֆրանսերեն	578.—
III.— Գիտություն	571.—
IV.— Հայոց Պատմություն	569.—
V.— Հայերեն	549.5
VI.— Կրթի	532.5
VII.— Անգլանոյր Պատմություն	530.—
VIII.— Գրքարար	525.—

ԴԱՄԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԶԱՓԸ ԱՐԻՍՏԵՐՈՒ ԸՆԹՅՔԻՆ

Յունիս	792
Մարտ	752
Ապրիլ Մայիս	739
Յունուար Փետրուար	736
Հոկտեմբեր Նոյեմբեր	721
Գեղեկեցիք	704

**ՄԻՋԻՆ Գ. — ԴԱՄԱՐԱՆԻ ՔԻՒ 20 ՉՈԳԻ**  
 ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ ՄԱՍԿԵՐԱՑՆՈՂ ՏԱՍՏԱԿ

ԱՄԻՍՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՐԵՆ	ՖՐԱՆՍԱ	ՀԱՅՈՑ ՊԱՏՍԵՑ	ԸՆԴՀ ՊԱՏՍԵՑ	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՍԱՐ
Հոկտեմբեր Կոյեմբեր	150.—	142.5	142.—	150.—	154.—	144.—	134.—	1016.5
Ռեպտեմբեր	150.—	138.—	138.—	148.—	156.—	142.—	138.—	1010.—
Յունուար Փետրուար	160.—	156.—	153.—	160.—	151.—	176.—	138.—	1094.—
Մարտ	158.—	159.—	156.—	167.—	147.—	155.—	146.—	1088.—
Ապրիլ Մայիս	160.—	160.—	160.—	167.—	168.—	162.—	157.—	1134.—
Յունիս	162.5	156.5	155.5	171.—	181.—	177.—	156.5	1190.—
	940.5	912.—	934.5	963.—	957.—	956.—	869.5	6532.5

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

- I. — Հայրց Պատմութիւն..... 963.—
- II. — Ընդհանուր Պատմութիւն..... 957.—
- III. — Գիտութիւն..... 956.—
- IV. — Կրօն..... 940.5
- V. — Ֆրանսերէն..... 934.5
- VI. — Հայերէն..... 912.—
- VII. — Ռատուրքիւն..... 869.5

ԴԱՄԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԶՄՔԸ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

- Յունիս..... 1190.—
- Ապրիլ Մայիս..... 1134.—
- Յունուար Փետրուար..... 1094.—
- Մարտ..... 1088.—
- Հոկտեմբեր Կոյեմբեր..... 1016.5
- Ռեպտեմբեր..... 1010.—

Յախօսկ 11

**ՄԻՋԻՆ ԲԻ — ԴԱՄԱՐԱՆԻ ՔԻՒ 22 ՉՈԳԻ**  
 ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ ՄԱՍԿԵՐԱՑՆՈՂ ՏԱՍՏԱԿ

ԱՄԻՍՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՐԵՆ	ՖՐԱՆՍԱ	ՀԱՅՈՑ ՊԱՏՍԵՑ	ԸՆԴՀ ՊԱՏՍԵՑ	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՍԱՐ
Հոկտեմ. Կոյեմբ.	155.—	154.—	162.5	149.—	149.—	133.—	136.—	1038.5
Ռեպտեմբեր	155.—	158.—	156.—	153.—	157.—	139.5	132.—	1050.5
Յուն. Փետր.	166.—	159.—	158.—	147.—	150.—	131.—	139.—	1050.—
Մարտ	157.—	161.—	156.—	154.—	148.—	158.—	150.—	1084.—
Ապրիլ Մայիս	166.5	165.—	153.—	158.5	160.5	173.5	150.—	1127.—
Յունիս	170.—	168.—	179.5	186.5	172.—	175.5	169.—	1220.5
	969.5	965.—	965.—	948.—	936.5	910.5	876.—	6570.5

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

- I. — Կրօն..... 969.5
- II. — Հայերէն..... 965.—
- III. — Ֆրանսերէն..... 965.—
- IV. — Հայրց Պատմութիւն..... 948.—
- V. — Ընդհանուր Պատմութիւն..... 936.5
- VI. — Գիտութիւն..... 910.5
- VII. — Ռատուրքիւն..... 876.—

ԴԱՄԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԶՄՔԸ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

- Յունիս..... 1220.5
- Ապրիլ Մայիս..... 1127.—
- Մարտ..... 1084.—
- Ռեպտեմբեր..... 1050.5
- Յունուար Փետրուար..... 1050.—
- Հոկտեմբեր Կոյեմբեր..... 1038.5

Յախօսկ 12

**ՄԻՋԻՆ ԲՈՒ — ԴԱՍԱՐԱՆԻ ՔԻՒՒ 31 ՀՈԳԻ**  
ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԲ ԴԱՍԿԵՐԱՅՆՈՂ ՏՈՒՍԱԿ

ԱՄԻՆՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՐԵՆ	ՖՐԱՆՍ.	ՀԱՅՈՑ ՊԱՏՄԹ.	ԸՆԴՀ. ՊԱՏՄԹ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՄԱՐ
Հոկտեմբեր նոյեմբեր	232.5	236.—	239.—	249.—	232.5	195.—	199.—	1583.—
Գեղեթեմբեր	234.5	242.—	240.—	247.—	236.—	208.—	288.5	1593.—
Յունուար Փետրուար	217.5	222.5	249.5	232.5	231.—	207.—	204.—	1564.—
Մարտ	239.—	240.—	258.—	246.—	222.—	231.5	223.5	1660.—
Ապրիլ Մայիս	254.5	252.5	239.5	249.5	220.5	239.5	204.5	1660.5
Յունիս	255.—	243.—	268.—	252.—	243.—	239.5	210.5	1711.—
	1433.—	1436.—	1494.—	1476.—	1385.—	1320.5	1227.—	9771.5

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԿԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿՐԳՈՎ

- I.— Ֆրանսերեն ..... 1494.—
- II.— Հայոց Պատմագրիան ..... 1476.—
- III.— Հայերեն ..... 1436.—
- IV.— Կրօն ..... 1433.—
- V.— Ընդհանուր Պատմագրիան ..... 1385.—
- VI.— Գիտագրիան ..... 1320.5
- VII.— Աստղագրիան ..... 1227.—

ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԶՓԸ ԱՄԻՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԲԻՆ

- Յունիս ..... 1711.—
- Ապրիլ Մայիս ..... 1660.5
- Մարտ ..... 1660.—
- Գեղեթեմբեր ..... 1593.—
- Հոկտեմբեր նոյեմբեր ..... 1583.—
- Յունուար Փետրուար ..... 1564.—

**ՄԻՋԻՆ Ա՛ — ԴԱՍԱՐԱՆԻ ՔԻՒՒ 31 ՀՈԳԻ**

ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԲ ԴԱՍԿԵՐԱՅՆՈՂ ՏՈՒՍԱԿ

ԱՄԻՆՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՐԵՆ	ՖՐԱՆՍ.	ԱՅԳ. ՊԱՏՄԹ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՄԱՐ
Հոկտեմբեր նոյեմբեր	185.—	206.—	218.—	220.—	193.—	192.—	1214.—
Գեղեթեմբեր	185.—	223.—	218.—	220.—	205.—	219.—	1270.—
Յունուար Փետրուար	209.—	224.—	228.—	222.—	208.—	219.—	1310.—
Մարտ	234.5	258.—	266.—	261.—	234.5	248.5	1502.5
Ապրիլ Մայիս	245.—	241.—	248.5	256.5	247.—	251.5	1489.5
Յունիս	254.5	253.5	276.—	260.—	237.5	210.—	1491.5
	1313.—	1405.5	1454.5	1439.5	1325.—	1340.—	8277.5

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԿԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿՐԳՈՎ

- I.— Ֆրանսերեն ..... 1454.5
- II.— Ազգային Պատմագրիան ..... 1439.5
- III.— Հայերեն ..... 1405.5
- IV.— Աստղագրիան ..... 1340.—
- V.— Գիտագրիան ..... 1325.—
- VI.— Կրօն ..... 1313.—

ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԶՓԸ ԱՄԻՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԲԻՆ

- Մարտ ..... 1502.5
- Յունիս ..... 1491.5
- Ապրիլ Մայիս ..... 1489.5
- Յունուար Փետրուար ..... 1310.—
- Գեղեթեմբեր ..... 1270.—
- Հոկտեմբեր նոյեմբեր ..... 1214.—

ՄԻՋԻՆ ԱՄ — ԴԱՄԱՐԱՆԻ ՔԻՒ 29 ՀՈԳԻ

ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔ ՄԱՏԿԵՐԱՅՆՈՂ ՏԱԽՏԱԿ

ԱՄԻՍՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅՆԵՐԵՆ	ՖՐԱՆԱ.	ՀԱՅՈՑ ՊԱՏՄԹ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՍԱՐ
Հոկտեմբեր նոյեմբեր	186.—	221.—	241.5	212.—	186.—	172.—	1218, 5
Դեկտեմբեր	200.—	225.5	213.—	203.5	200.—	201.5	1243, 5
Յունուար փետրուար	205.5	227.—	237.—	202.5	205.5	210.—	1287, 5
Մարտ	222.—	225.—	250.—	250.—	227.—	226.5	1400, 5
Ապրիլ Մայիս	212.5	222.—	220.—	206.—	214.5	207.—	1282.—
Յունիս	198.5	176.—	241.—	197.5	192.5	189.5	1195.—
	1224.5	1296.5	1402.5	1271.5	1225.5	1206.5	7627.—

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

I. — Յրամաներին	1402, 5
II. — Հայերին	1296, 5
III. — Հայոց պատմության	1271, 5
IV. — Գիտության	1225, 5
V. — Կրթին	1224, 5
VI. — Ուսողության	1206, 5

ԴԱՄԱՐԱՆԻ ԱՆԽԱՏԱՆՔԻՆ ՉԱՓԸ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ

Մալա	1400, 5
Յունուար փետրուար	1287, 5
Ապրիլ Մայիս	1282.—
Դեկտեմբեր	1243, 5
Հոկտեմբեր նոյեմբեր	1218, 5
Յունիս	1195.—

ՄԻՋԻՆ ԱՄ — ԴԱՄԱՐԱՆԻ ՔԻՒ 26 ՀՈԳԻ

ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔ ՄԱՏԿԵՐԱՅՆՈՂ ՏԱԽՏԱԿ

ԱՄԻՍՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅՆԵՐԵՆ	ՖՐԱՆԱ.	ԱՅՐ. ՊԱՏՄԹ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՍԱՐ
Հոկտեմբեր նոյեմբեր	200.—	228.5	255.5	221.—	206.—	203.—	1314.—
Դեկտեմբեր	200.—	229.5	223.—	244.5	210.—	210.5	1317.5
Յունուար փետրուար	189.—	236.—	250.5	214.5	186.—	219.5	1295.5
Մարտ	201.—	170.—	208.—	197.5	197.—	181.5	1155.—
Ապրիլ Մայիս	208.—	177.5	184.5	175.5	203.—	180.5	1124.—
Յունիս	195.5	164.5	208.—	173.—	195.5	184.—	1120.5
	1188.5	1206.—	1329.5	1226.—	1197.5	1179.—	7326.5

ԱՐԱՐԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

I. — Յրամաներին	1329, 5
II. — Ազգային Պատմության	1226, —
III. — Հայերին	1206, —
IV. — Գիտության	1197, 5
V. — Կրթին	1188, 5
VI. — Ուսողության	1179, —

ԴԱՄԱՐԱՆԻ ԱՆԽԱՏԱՆՔԻՆ ՉԱՓԸ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ

Դեկտեմբեր	1317, 5
Հոկտեմբեր նոյեմբեր	1314.—
Յունուար փետրուար	1295, 5
Մարտ	1155.—
Ապրիլ Մայիս	1124.—
Յունիս	1120, 5

ՏԱԻՏԱԿ ՊՕՂՈՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԱՆՈՒ ԿԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԽԱԿՐՏԱՑ ՅԱՌԱԶԴԻՄՈՒՔԱՆ  
1923-24 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻԱՑ ԸՆԹԱՑՔԻՆ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	ԿԱՐԳԸ ԿԸ ՓՈՒՅՆ			ԿԱՐՔԸ ՓՈՒՍՄ ՁԵՆ			ՎԵՐԱՔՆՆԵԼԻ ԵՆ			
	հճՆՈ	թՅՈՒՄ	ՉՆՅՅ	հճՆՈ	թՅՈՒՄ	ՉՆՅՅ	հճՆՈ	թՅՈՒՄ	ՉՆՅՅ	%
Բարձր. Ա.	7	5	12	—	—	—	—	—	—	—
Միջին Գ.	7	14	21	—	—	—	—	—	—	—
՝ Բ. I	6	6	12	—	2	2	4	6	10	38.5
՝ Բ. II	9	13	22	1	2	3	3	3	6	19.3
՝ Ա. I	11	20	31	—	—	—	—	1	1	3.—
՝ Ա. II	9	9	18	—	—	—	4	6	10	35.5
՝ Ա. III	10	4	14	—	6	6	4	6	10	33.4
<b>ՏԱՐ. Գ. I</b>	21	12	33	—	—	—	—	—	—	—
՝ Գ. II	12	17	29	—	3	3	6	3	9	20.5
՝ Գ. III	3	5	8	9	10	19	3	5	8	23.—
՝ Բ. I	15	16	31	2	3	5	2	5	7	13.5
՝ Բ. II	21	13	34	—	—	—	1	—	1	2.9
՝ Բ. III	8	8	16	2	13	15	3	4	7	18.—
՝ Ա. I	20	16	36	—	2	2	—	1	2	5.—
՝ Ա. II	16	18	34	1	1	2	1	1	2	5.—
՝ Ա. III	22	16	38	—	2	2	—	1	1	2.7
<b>ԸՆԹԱՑՔՆԵՐ</b>	197	192	389	15	44	59	32	42	74	14.2
				74.5			11.3			

**Ք Ո Ւ Ա Պ Ա Տ Կ Ե Ր**  
ԱՐԽԱԿԱՆԵՐՈՒ ԲԱԼՂԱՏՈՒՅԵԱՆ 7 ԴԱՄԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ԴԱՄԱՐԱՆՆԵՐ	ԿՐՈՆ	ՀԱՅԵՐԵՆ	ՖՈՒՆԱ,	ՀԱՅՈՑ ՊՍՏՄԹ.	ԳԻՏՈՒԹ.	ՈՒՍՈՂԹ.	ԳՈՒՄԱՐ
<b>Միջին Ա. I</b>	465.—	495.—	512.—	510.—	470.—	478.—	2930.—
„ <b>Ա. II</b>	463.—	485.—	530.—	500.—	472.—	450.—	2900.—
„ <b>Ա. III</b>	500.—	506.—	561.—	473.—	507.—	500.—	3047.—
„ <b>Բ. I</b>	390.—	462.—	457.—	452.—	440.—	380.—	2581.—
„ <b>Բ. II</b>	487.—	522.—	530.—	527.—	467.—	435.—	2968.—
„ <b>Գ.</b>	435.—	500.—	517.—	447.—	525.—	477.—	2901.—
<b>Բարձր. Ա.</b>	530.—	552.—	583.—	570.—	583.—	590.—	3408.—
	3270.—	3522.—	3690.—	3479.—	3464.—	3310.—	20735.—

ԱՐԽԱԿԱՆԵՐԸ ՆԱԽԱՍԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

I.— Զրամաներին	3690.—
II.— Հայերին	3522.—
III.— Հայոց Պատմութիւն	3479.—
IV.— Գիտութիւն	3464.—
V.— Աստղագիւն	3310.—
VI.— Կրօն	3270.—

ԴԱՄԱՐԱՆՆԵՐԸ ՇԱՀԱԾ ՆԻՇԵՐՈՒ ԿԱՐԳՈՎ

Բարձրագոյն Ա.	3408.—
Միջին Ա. III	3047.—
» Բ. II	2968.—
» Ա. I	2930.—
» Գ	2901.—
» Ա. II	2900.—
» Բ. I	2581.—

**Ցախօսելի 21**



ԱՇԱԿԵՐՑՈՒՔԵԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԷՋ ԸՍՑ ԴԱՄԱՐԱՆՆԵՐՈՒ . ՄՈՒՏՔԻ ԵՒ ԵԼՔԻ

ԴԱՄԱՐԱՆՆԵՐ	ՏԱՐՈՒՄ ՍՎԳՔԻՆ ԵՐԱՄ ԵՆ			ՏԱՐՈՒՄ ԸՆԹԱՑՔԻՆ ՄՏԱՄ			ՏԱՐՈՒՄ ԸՆԹԱՑՔԻՆ ԵԼԱՄ			ՏԱՐՈՒՄ ՎԵՐՋԸ ՄՆԱՍՄ			ՄԱՍՑՈՒՔԻՆ
	ԿՁՆՆ	ՑՅՆՆ	ԻՋՆՆ	ԿՁՆՆ	ՑՅՆՆ	ԻՋՆՆ	ԿՁՆՆ	ՑՅՆՆ	ԻՋՆՆ	ԿՁՆՆ	ՑՅՆՆ	ԻՋՆՆ	
Բարձր. Ա.	9	5	14	—	—	—	2	2	2	7	5	12	Տարուայ սկզբին՝ 276 աւարուայ վերջին՝ 247 % մանջեր % 49,6 280 50,4 47,9 275 52,1
Միջին Գ.	9	17	26	—	—	—	2	5	5	7	14	21	
՝ Բ. I	17	15	32	1	1	1	6	3	9	11	13	24	
՝ Բ. II	14	18	32	—	—	—	1	—	1	13	18	31	
՝ Ա. I	15	25	40	1	1	2	4	5	9	11	21	32	
՝ Ա. II	14	16	30	1	1	2	2	2	4	13	15	28	
՝ Ա. III	15	16	31	2	1	3	2	2	4	15	15	30	
Տարր. Գ. I	21	12	33	—	—	—	—	—	—	21	12	33	
՝ Գ. II	19	24	43	—	—	—	1	1	2	18	23	41	
՝ Գ. III	17	24	41	—	—	—	2	4	6	15	20	35	
՝ Բ. I	19	24	43	—	—	—	—	—	—	19	24	43	
՝ Բ. II	27	13	40	—	—	—	5	—	5	22	13	35	
՝ Բ. III	12	18	30	2	8	10	1	1	2	13	25	38	
՝ Ա. I	22	18	40	—	1	1	1	—	1	21	19	40	
՝ Ա. II	21	19	40	—	—	—	2	—	—	19	19	38	
՝ Ա. III	24	17	41	—	2	2	2	—	2	22	19	41	
	276	280	556	5	15	20	33	21	54	247	275	522	

ՊՕՂՈՍԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՅԷԶԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՔԻԻԸ ՏԱՐՈՒԱՅ ՍԿԻՋԲՆ ՈՒ ՎԵՐՋԸ  
1923-1924

ԲՈՂԲՈՋ	ԿՈՎՈՆ			ՇԱՂԻԿ			ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻԻԸ			Տարւում սկիզբին եղած են	Տարւում բնթացքին եղած են	Տարւում վերջին մնացած են
	Ա.	Բ.	ԿԿՆ	Ա.	Բ.	ԿԿՆ	Ա.	Բ.	ԿԿՆ			
16 23 39 18	յՂԳՅՈՒՆ	42	39	19	30	14	30	16	97	212	12	200
	ՃՂՈՒՄ	24	17	1	15	—	16	7	115	7	108	
	ԿԿՆ	18	15	—	15	—	14	5	97	5	92	
1 3 4 1	յՂԳՅՈՒՆ	2	1	1	3	—	1	1	12	1	12	
	ՃՂՈՒՄ	1	1	—	1	—	1	—	7	—	7	
	ԿԿՆ	1	—	—	—	—	—	—	5	—	5	
15 20 35 17	յՂԳՅՈՒՆ	40	31	18	27	14	27	14	92	200	200	
	ՃՂՈՒՄ	23	16	20	14	—	15	—	108	—	108	
	ԿԿՆ	17	15	18	13	—	14	—	92	—	92	

ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆՈՒՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻԻԸ  
1923-24 ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՍԿԻՋԲԸ ԵՒ ՎԵՐՋԸ

	ՆԱԽԱԿԻՔԱՐԱՆ			ՄԱՆԿԱՊԱՐՅԷԶ			ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԻԻԸ			ԱՂՋ.	ՄԱՆՋ.
	ԱՂՋԻԿ	ՄԱՆՋ	ԸՆԴՀԱՆՈՒՆ	ԱՂՋԻԿ	ՄԱՆՋ	ԸՆԴՀԱՆՈՒՆ	ԱՂՋԻԿ	ՄԱՆՋ	ԸՆԴՀԱՆՈՒՆ		
ՍԿԻՋԲԸ 923 ՇՈԿ.	276	280	556	104	108	212	380	388	768	49	450,6
ՆՈՐԵԿ	5	15	20	—	—	—	5	15	20		
ԵԼԱԾ	34	20	54	5	7	12	39	27	66		
ՆԵՐԿԱՅ ՔԻԻԸ	247	275	522	99	101	200	346	376	722	49,3	50,7

ԾԱՆՈԹ — 1922—23 դպրոցական տարեշրջանին երկսես աշակերտութեան ընդհանուր թիւն եղած է, տարուայ սկիզբը 570, վերջը՝ 621.  
Աշակերտներու թուին յաւելումը՝ ըստ նախորդ տնօրէն Պ. Պետրոսեանի տեղեկագրին՝ պէտք է վերագրել գաղթականութեան հոսանքին.

**ԴԱՍԱԻՈՐՈՒՄ 1923-24 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ**  
ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ԵԼԱՍ 54 ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՇՐՈՒՄՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

20	նոգի՝ գործի եւ արհեստի մտած
16	» քաղաքիս մեկնած
6	» հիւանդութեան պատճառով
4	» օտար վարժարան գացած
8	» զանազան պատճառներով
54	

ՑՈՒՑԱԿ ՊՕՂՈՍԵՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՏԱՐԵՎԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ

1923-1924

1923-24	Տ-ԱI		Տ-ԱII		Տ-ԱIII		Տ-ԲI		Տ-ԲII		Տ-ԲIII		Տ-ԳI		Տ-ԳII		Տ-ԳIII		Մ-ԱI		Մ-ԱII		Մ-ԱIII		Մ-ԲI		Մ-ԲII		Մ-Գ		Բ-Ա		ԸՆԴՀ-ԳՈՒՄԱՐ		ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	ԲՑ.	ՅՊ.	
Ա. ԿԻՍԱՄԵԱԿ	176	118	172	22	122	94	169	—	87	115	227	32	78	6	121	20	132	—	4	—	44	32	22	1	11	—	38	7	120	—	33	82	1552	530	Միջին հաշվով իրարանջիւր աշակերտ բացակայած է 3,3 օր: *
Բ. ԿԻՍԱՄԵԱԿ	245	10	122	—	358	65	200	—	147	38	256	21	68	45	74	—	142	—	32	—	46	28	86	1	131	—	122	2	9	—	25	7	2031	19	Միջին հաշվով իրարանջիւր աշակերտ բացակայած է 3,7 օր:
ԸՆԴՀ. ԳՈՒՄԱՐ	421	128	294	23	480	159	369	—	234	153	483	53	146	51	195	20	274	—	36	—	90	60	108	2	142	—	160	9	129	—	58	89	3583	721	Միջին հաշվով իրարանջիւր աշակերտ տարուան մեջ 7 օր բացակայած է:

\*) Աշակերտներուն թիւը առնուած է 551, եւ երկու յապաղումը հաշուած է մեկ բացակայութիւն:

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՔՈՇԱԿ ՎՃԱՐՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՔԻՒՆ ՈՒ ՔՈՇԱԿԻ ՔԱՆԱԿԸ

ԱՇԱԿԵՐՏ 345

ԾՆՈՂ.Բ 232

	40	36.5	30	27.5	25	23	21.5	20	18	15	12.5	10	7.5	5	ԳՈՒՄԱՐ	
															345	աշակերտ
Ամեն մեկ աշակերտի ամսական բոշակը															6	
Քանի՞ աշակերտ կը վնարեն	2	3	27	10	49	3	3	48	3	80	24	79	8			
Ամսական բոշակներու գումարը	80	109.5	810	275	1225	69	64.5	960	54	1200	300	790	60	30	6027	դրուշ
Տարեկան (9 ամիս) բոշակներու գումարը	720	985.5	7290	2475	11025	621	580.5	8640	486	10800	2700	7110	540	270	54243	դրուշ

### ԹԻՒ 26 ԵՒ 26<sup>A</sup> ՏԱԽՏԱԿՆԵՐԻ ԱՌԻՅՈՎ

Թիւ 26 տախտակը մեզ տալիս է Ազգային իշխանութեան նախահաշւի այն մասը, որ վերաբերում է վարժարանին, Սախրերի այն կացութիւնն է, որ նախահաշւողները կարծել են թէ պէտք է գոյութիւն ստանայ տարւայ ընթացքին, Սա մի գուշակութիւն է ապագայի մասին, մի սպասում՝ գալիքի հանդէպ։

Թիւ 26A տախտակը մեզ տալիս է իրական կացութիւնը, գուշակութեան իրագործումը, սպասումի կատարումը։ Համեմատելով այդ երկու տախտակները, մենք տեսնում ենք. 1) որ թուշակները փոխանակ սպասւած 600 ոսկին կամ աւելին տալու, 7936 զրշ. պակաս են տւած. 2) ձեռագործների վիճակահանութիւնը փոխանակ 100 ոսկի բերելու, տւած է 5880 զրշ. պակաս։ Այսպիսով նախահաշւած մուտքերից միմիայն Պօղոս փաշա նուպարի նպաստն է, որ ստացւած է անփոփոխ։ Երկու պակասորդ գումարները, որ 13816 զրշ. ի են հասնում, պիտի ամբողջովին ծանրանային ազգային սնտուկի վրայ, եթէ ծախսերը հասնէին նախահաշւած գումարին։ Բարեբախտաբար վարժարանի վրայ ծախսւած է պակաս քան նախահաշւած են առաջուց, փոխանակ 3500 ոսկու, վարժարանի վրայ ծախսւած է 345206,2 զրշ., այսինքն 4793,8 զրշ. պակաս։ Միւս կողմից վարժարանն ունեցած է չնախահաշւած մուտքեր՝ գրքերի վաճառումից, դպրոցական հանդէսներից և մանր հատուցումներից, ընդամենը 5785,9 զրշ., որ չծախսւած գումարի հետ միասին հաւասար է 10579,7 զրշ. և գրանով մեծապէս հաւասարակշռոււմ է ազգային սնտուկի 13816 զրշ. պակասորդը, հասնելով 3236,3 զրշ.։ Այսպիսով ազգային սնտուկն այս տարի ստիպւած է եղել փոխանակ դպրոցին տալու նախահաշւած 2780 ոսկին, տալ 281236,3 զրշ.։

Գալով ելքի բաժնին՝ իբր բացառիկ վարձատրութիւն տրւած 2400 զրշ. է, որ կարօտ է յատուկ բացատրութեան։ Այդ գումարից 1200 զրշ. տրւած է դպրոցի բժիշկին, 400 զրշ. Պ. Գ. Թագևորեանին, իր յաւելեալ աշխատանքների համար և 800 զ. Պ. Ա. Ոսկերակցեանին՝ յետամնաց աշակերտների հետ պարագելու համար։ Աշակերտական բեմի կառուցման համար ծախսւած 1150 զրշ. լիուրի վերականգնւած է աշակերտական հանդէսների տւած 1756,2 զրշ. հասոյթով։

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի

ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 1923-24 ՈՒՍՈՒՄՆ . ՏԱՐՈՒԱՅ

ՄՈՒՏՔ

Ազգային Սնտուկէն	278000 .—
Պօղոս փաշա Նուպարէն	2000 .—
Զեռագործներու վիճակահանութենէն	10000 .—
Թոշակներէ	60000 .—
	<hr/>
	350000 .—

ԵԼՔ

Պաշտօնէութեան վարձատրութիւն	318500 .—
Գրենական պիտոյք	5000 .—
Ճամբու ծախս ևն .	26500 .—
	<hr/>
	350000 .—

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ՊՕՂՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 1923-24 ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ

ՄՈՒՏՔ

Ազգային Սնտուկէն	281236 , 3
Պօղոս փաշա Նուպարէն	2000 .—
Զեռագործներու վիճակահանութենէն	4120 .—
Տղայոց թոշակներէն	52064 .—
Գարրոցական հանդէսներէ	1756 , 2
Գրենական պիտոյքներու վաճառումէն	4016 , 5
Զանազան մանր մուտքեր	13 , 2
	<hr/>
	345206 , 2

ԵԼՔ

Պաշտօնէութեան թոշակ	318500 .—
Բեմի շինութեան	1150 .—
Գրասեղաններու շինութեան	8100 .—
Գրենական պիտոյք	6672 , 2
Զեռագործի նիւթ և ֆրէօպէլեան առարկաներ	1636 , 5
Զանազան ծախքեր, հանդէս ևն .	3604 , 5
Տպագրութեան և ծանուցումի	434 .—
Բացառիկ վարձատրութեան	2400 .—
Ճամբու ծախս	2709 .—
	<hr/>
	26706 , 2
	<hr/>
	345206 , 2

ՎԱՐԺԱՐԱՆԻՍ ԵՂԱԾ ԶԱՆԱԶԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ


- 1.— Մէթր Թէլեանի կողմէ, մէկ օրացոյց :
- 2.— Պ. Գ. Միսիթարեանի կողմէ. Souvestre-ի le foyer breton.
- 3.— Պ. Գ. Իփէկեանի կողմէ. H. Voibert-ի Annuaire de la jeunesse.
- 4.— Զարդարեան գրատան կողմէ. պատի օրացոյց մը :
- 5.— Արմենակ պէյ Կամսարականի կողմէ. 6 եգ. ոսկի. վարժարանի աշակերտներուն շաքարեղէն բաժնուելու համար Կաղանդի առիթով :
- 6.— Պ. Ս. Կէօնճեանի կողմէ. քիմիական փորձերու 11 աւօթներ :
- 7.— Տելեմաք պէյ Թիւթիւնճեանի կողմէ. 102 կտոր հայերէն և ֆրանսերէն գրքեր և կենդանիներու 6 նկարներ :
- 8.— Պ. Յ. Խանճեանի կողմէ. 31 հայերէն, 40 ֆրանսերէն և 10 անգլերէն դասագրքեր :
- 9.— Պ. Գ. Մանուկեանի կողմէ. աշակերտական բեմի վարագոյրի կերպաս :
- 10.— Մամբրէ ձ. վրդ. ի կողմէ Տնօրէնութեան տրամագրութեան տակ գրուած է՝ որդեգրուած որբուհիներու 11 զըլխարկ և 10 զոյգ կօշիկ՝ չքաւոր աշակերտներու բաշխուելու համար :
- 11.— Պ. Մ. Գլըճեանի կողմէ. մէկ ելեկտրական հովհար :
- 12.— Գեր. Թորգոմ եպս. ի կողմէ. հանգուցեալ Խէրեանի Թըղթերէն հանուած Ափրիկէի քարտէս մը :
- 13.— Պ. Ա. Կուտուզեանի կողմէ. փոքրիկ արձան մը. որ մըրցանակ արուեցաւ բարձր. դասարանէն լաւագոյն գիր ունեցողին, նոյնինքն նուիրատուին գնահատութեամբ :

14.— Շրջանաւարտուեցիներու միութիւնը Պ. Պետրոսեանի միջոցով բաւխած է՝

1850 աւետար	632, 5 զրշ.
792 մատիա	148.— »
29 գիրք	188.— »
մէկ աշակերտուհիի սնունդի գրամ	54.— »
	<hr/>
ընդամենը	1022, 5 »

- 15.— Դպրոցն ինքը 142 աշակերտի տուած է 1765 զրշ. արժուութեամբ գիրք, այսինքն միջին հաշուով ամէն մէկին 12, 5 զրշ. :
- 16.— Պ. Ն. Փանոսեանի կողմէ հինգ գածէ արձանիկներ՝ նկարչութեան մէջ յաջող աշակերտներուն մրցանակ տրուած :





LIBRARY OF THE UNIVERSITY OF TORONTO



« Ազգային գրադարան »



NL0231705

51. 330